№ 100 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՄԱՅԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՄԱՅԻՍԻ № 100

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կը լինեն 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Տանջվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դօկումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամ Մովսէսեան և իր զաւակները՝ Սարգիս, Ռուբէն, Փեփրոնիա, Հռիփսիմէ և Հեղինէ ՍԱԿԱՅԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, իսկ միւսներն իրանց սիրելի հօր՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը չորեքշաբթի, մայիսի 13-ին, երեկ. ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հինգշաբթի, մայիսի 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլօլակսկայա փող. № 3) դէպի Ջգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 301. 3—2

Մարգարիտ և Արշակ ՄԵԼԻՔ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր անմոռանալի հօր, իսկ երկրորդն իր սիրելի աներոջ՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը չորեքշաբթի, մայիսի 13-ին, երեկ. ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հինգշաբթի, մայիսի 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլօլակսկայա փող. № 3) դէպի Ջգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 302. 3—2

Թադէոս Ամատունեանց և իր դուստրները հնարաւորութիւն չունենալով առանձին-առանձին շնորհակալութիւն յայտնել մօտաւոր և հեռաւոր բարեկամներին և ազգականներին, որոնք թէ նամակներով և թէ հեռագիրներով մխիթարեցին

ՄԱՅՐԻԿ
ՍՐԲՈՒՀԻ ԱՄԱՏՈՒՆԵԱՆՑԻ

մահվան առիթով, յայտնում են իրանց խորին շնորհակալութիւնը «Մշակի» միջոցով։ 308. 1—1

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
Մայիսի 20-ից կը սկսի իր ներկայացումները
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Բացի արդէն յայտարարված ռեպերտուարից, առաջին անգամ հայ բեմի վրա կը ներկայացվի
ՇԷՔՐԻ ԳԱՆԷՄԻ ԱՐԱԲՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ
„ԱՆԹԱՐ“
պիէսը, որ բնագրից թարգմանել է Պ. ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆԸ
Այս պիէսի համար պատրաստվում են յատուկ զգեստներ, դեկորներ և երաժշտութիւն։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
303. 1—1

Համառուսական Քաղաքների Միութեան Կովկ. Բաժանմունքի Բիւրոն հրաւիրում է նրանց, որոնք կը կամենան ստանձնել ուտելիքներ, անասունների կեր և այլն մատակարարելու գործը, ուղարկել Բիւրոյին իրանց յայտարարութիւնները՝ մատնանշելով մատակարարութեան տեսակը և հասցէն։ Մանրամասնութիւնների հետ կարելի է ծանօթանալ Բիւրոյի Մթերային Բաժանմունքում, ցեր. ժամը 10-ից մինչև 3-ը։ 305. 1—1

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, չորեքշաբթի, մայիսի 13-ին
Տեղի կունենայ
ՀԱՄԵՐԳ
հայկական խառն երգեցիկ խմբի՝ ղեկավարութեամբ Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ և Ն. ՍԱՐԴԱՐԵԱՆԻ, մասնակցութեամբ դաշնակահարուհի ԿԱՐԱՋԵՎԱ-ՎԱՍԻԼԻԵՎԱՅԻ։
Սկիզբը երեկ. ժամը 8-ին։
Տոմսակների գները՝ 1 ր. մինչև 30 կ.։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ ակումբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կ.։
306. 1—1

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յօգուտ «Մշակի» ֆոնդի
հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ	գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ.	» — 30 կ.
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Ահարոնեանի	» — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ)	1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—7

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 մայիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական՝ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մայիսի 9-ին Կովկասեան ռազմաճակատում խոշոր ռազմական ընդհարումներ չեղան։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԷԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

10—11 մայիսի

ՓԱՐԻԶ.—Դարդանէլում թիւրքական երկու դիվիզիա Լիման-փաշայի անձնական հրամանատարութեամբ կատաղի յարձակում գործեցին Կալա-Թեփէում կենտրոնացած անգլիացիների դէմ, սակայն բոլորովին ցիրուցան եղան և ծանր պարտութիւն կրեցին։

Դրա հետ միասին մեր դաշնակիցները ունեցան ուրիշ աջողութիւններ եւ ծովի վրա, ուր սուզանաւերից մինին աջողվեց ջրասուզել 2 ականանաւ և 2 շոգենաւ, որոնցից մէկը զօրքեր էր փոխադրում։

Թերակղզու միջին մասում մեր զօրքերը կենտրոնացել են մի քանի կէտում ընդամենը մի քանի մետր հեռու թիւրքական խրամատներից։ Չը նայած թշնամու շատ խիստ ինքնապաշտպանութեան, այդ զօրքերը ունեցան բաւականին աջողութիւն։

ՍՈԼՈՒՆ.—Միտիլէնից հաղորդում են.

«Կիլիդ-բահր բերդը քարուքանդ արվեց ուժեղ ռմբակոծութիւնից յետոյ։

Նաղարան եռանդով ռմբակոծվում է։

Դաշնակից զօրքերը արիւնահեղ կռիւներից յետոյ գրաւեցին Մադիտոս քաղաքը։

ԱԹԷՆՔ.—Դաշնակիցները նեղուցում սպասում են օգնական գնդերի՝ վճռական յարձակումների համար։

Նեղուցի ասիական ափում զօրքերին ափ իջեցնելու գործողութիւնները սկսվել են։

ՆԱՄԱԿ ԼՈՆԴՈՆԻՑ

Լոնդոն, 19 ապրիլի (ն. տ.)

Արշակ Չօպանեան, որ այժմ Լոնդոն կը գտնուի, Պարիզէն մեկնելէն քիչ առաջ խումբ մը պարիզաբնակ հայոց մէջ 500 ֆրանկ հաւաքած և ղրկած էր մեծանուն գրագէտ Մօրիս Բառէսին՝ ներկայ պատերազմին ամենէն կսկծալի զոհերուն, հաշմանդամ զինուորականներուն ի նպաստ այս վերջինիս բացած հանգանակութեան համար. Նամակին մէջ զոր ընկերացուցած էր այդ նուէրին, մեր հայրենակիցը կըսէր՝ «... Կը փափաքէի, որ աւելի կարեւոր ըլլար այս նուէրը, բայց այս պահուս Հայաստան կը գտնուի այն նոյն ցաւագին կացութեան մէջ, ուր կը գտնուին Բելժիքա և Լեհաստան. ահաւոր վայրագութիւններ տեղի ունեցած են այնտեղ՝ այն համակրութեան և աջակցութեան պատճառով, զոր հայ տարրը ցոյց տուած է ռուս բանակին, 100,000-ի չափ փախստականներ ապաստանած են Կովկաս՝ ամենաթշուառ կացութեան մէջ. աշխարհիս ամեն կողմը գտնուող հայերը մեծ հանգանակութիւն մը բացած են՝ օգնութեան հասնելու համար իրենց տարաբաղդ եղբայրներուն. Իմ Պարիզի հայրենակիցներս ուզեցին սակայն անպատճառ մասնակցիլ նաև այն սրտաշարժ հանգանակութեան, զոր դուք բացած էք. հաճեցէք այս լուման ընդունիլ իբրև հայ ժողովրդի երախտագէտ հիացման արտայայտութիւնը հանդէպ Ֆրանսայի և ազատութեան այդ հերոսական մարտիրոսներուն և Ֆրանսայի նկատմամբ իր սիրոյն և անձնուիրութեան իբր մէկ նոր հաւաստիքը»։

Մօրիս Բառէս պատասխանած է հետևեալ նամակով.

«Իմ սիրելի եղբայրակից,

«Ուրախ եմ արձանագրել Պարիզի հայկական խմբակին նուէրը պատերազմի հաշմանդամներուն օգնութեան գործին։ Ազնիւ հայ ժողովրդին համակրութեան այս ցոյցէն պիտի զգացուին մեր բոլոր դիւցազնական զինուորները։ Իրենց ուղղեալ իմ շնորհակալութեանս կը միացնեմ ձեր հայրենակիցներուն համար իմ համակրութեանս և ձեզի համար իմ սրտագին անձնուիրութեանս հաւաստիքը։ Սրտանց ձերդ՝ Բառէս»։

Այս նամակին Չօպանեան պատասխանած է հետևեալ նամակով.

«Սիրելի և մեծանուն եղբայրակից,

«Այստեղ՝ Լոնդոն, ուր կը գտնուիմ շաբաթէ մը ի վեր, ստացայ ձեր սիրուն նամակը։ Դուք շատ վեհանձն էք շնորհակալութիւն յայտնելով իմ հայրենակիցներուս և ինծի. մենք մեր պարտքը միայն կատարեցինք. Մեր Պարիզի գաղութը, ինչպէս մեր բովանդակ ազգը, անհրաժեշտ նկատեց այդ պարտքը կատարել՝ պատերազմի սկիզբէն ի վեր՝ մէկէ աւելի անգամներ, և այլ և այլ ձեւերով, բայց ամեն ինչ, որ ըրինք, դեռ շատ քիչ բան է՝ ի նկատի ունենալով ինչ որ մենք կը պարտինք Ֆրանսային և իր կուլտուրային։ Ասկից զատ, Ֆրանսայի դատը մեր դատն իսկ է, ինչպէս որ մեր դատը մէկ մասնիկն է ազատութեան մեծ դատին, որուն համար՝ իր ազնիւ դաշնակիցներուն հետ՝ Ֆրանսա գերագոյն պայքարը կը մղէ այս պահուս։

«Ես եկեր եմ այստեղ՝ իմ Լոնդոնի հայրենակիցներուս հետ մեր երկրին ու մեր դատին ներկայ կացութեան վրայ խորհրդակցելու, բայց մենք այն զգացումն ունինք, որ մեր հայրենիքին ազատումը փութացնելու համար մեր ջանքերը բազմապատկելով՝ կ՚ըլլայ մը շնորհէն աշխատակցած կ՚ըլլանք դաշնակիցներու պայքարին ընդդէմ բռնութեան ու բարբարոսութեան։ Աբդիւլ-Համիդի թիւրքերն ու Վիլհելմի գերմանները միթէ արդէն իսկ դաշնակցած չէին մեր փոքրիկ ժողովրդին արդարութեան ծարաւը արիւնի մէջ խեղդելու համար, Հիւգոյի, Շէքսպիրի և Տօլստոյի մեծ ազգերուն և անոնց վեհանձն մարդկայնութեան ոգիին դէմ յարձակելու համար միանալէ առաջ։ Ու չէ՞ որ կապրինք վսեմ վայրկեանի մը մէջ, ուր կեղեքեալ ժողովուրդներու դատերը այլ եւս կզլխացեալ չեն ներկայանար, Ալզաս-Լօրէնի, Հայաստանի, Լեհաստանի և նմանօրինակ բոլոր հարցերը այժմ միակ հարց մը կը կազմեն։ Ռուսներ կը կռուին Ալզաս-Լօրէնի համար. սերբեր, բելժիքացիներ կը մաքառին Լեհաստանի համար, ու Ֆրանսայի և Անգլիայի նաւազները, որ դիւցազնօրէն կը մեռնին Դարդանէլին նեղուցին մէջ, այնքան իրենց ազգային դատին, որքան տարկացեալ Արևելքի ազատագրման համար կը զոհուին, ինչպէս հայ կամաւորները, որ ֆրանսական կամ ռուսական բանակներուն մէջ կը կռուին, գիտակցութիւնն ունին ոչ միայն իրենց շղթայակապ հայրենիքին համար պայքարելու, այլ և, ու մանաւանդ, Ֆրանսային, Անգլիային, Ռուսիոյին ու բոլոր այն ազգերուն համար որ արդարութեան և ազատութեան պաշտամունքն ունին։ Անհնար է որ ազատական մարդկութեան այս միահամուռ ճիգը բռնակալութեան դէմ՝ չյանգի՝ աշխարհիս փրկութեան ու պատւոյն համար մեծապայծառ յաղթանակի մը։ Նոր աշխարհ մը, լաւագոյն աշխարհ մը, ապահովապէս պիտի ծնի այս արիւնի ջրհեղեղէն»։ Տ.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Աթէնք փախած թիւրք օֆիցէրները պատմում են, որ Զմիւռնիայում զօրքերի մի մասը ապստամբվել է։

◆ Կ. Պօլսում իտալական դեսպանի վրա յարձակվել է մի թիւրք փոխ-գնդապետ։

◆ Կ. Պօլսում կալանաւորվել է յունաց պատրիարքարանի քարտուղար Պօպանդօպուլօն, որ մեղադրվում է հայկական չեղեալ ապստամբութեան մասնակցելու մէջ։

◆ «Ут. Р.» հաղորդում է, թէ դաշնակից հետախուզողները պարզել են, որ թիւրքական գլխաւոր ուժերը քաշվում են դէպի Բուլայիր, որի ամրութիւնների ամրակծութիւնը ուժեղացված է։

◆ «Р. Сл.» հաղորդում է, թէ գերի թիւրքերը, որ գտնվում են Սեվաստոպոլում, ասում են, թէ դաշնակից նաւատորմը եթէ մտնենայ Դարդանէլին և երևայ Բոսֆորում, այն ժամանակ երիտասարդ թիւրքերի և գերմանացիների մտադրած ջարդի փոխարէն՝ ջարդելու են գերմանացիներին և երիտասարդ թիւրքերին։ Այս բանը իմանալով «Մ. և Ա.» կոմիտէի անդամները շտապով հեռանում են Կ. Պօլսից, գերմանացիները ուղարկում են իրենց ընտանիքները։

◆ Կ. Պօլսում շարունակվում է հայ և յոյն գործիչների ձերբակալութիւնը։ Այս օրերս հրապարակով պատժված են 3 յոյն և 4 հայ։

◆ «Н. Вр.» հաղորդում, որ ամբոխը Թաւրիզում սպառնում է անկարգութիւններ անել։ Երևացել են դեմոկրատական կուսակցութեան կոմիտէտի յայտարարութիւններ, որոնցով ազգաբնակութեանը հրաւիրում են աջակցել թիւրքերին։

ԱԼԱՇԿԵՐՏ

Ալաշկերտի հովիտը, ուր այժմ գործում են մեր յաղթական զօրքերը, հայկական թագաւորութեան ժամանակ կազմում էր Այրարատեան նահանգի 20 գաւառներից մէկը և կոչվում էր Բագրևանդ, իսկ այժմեան Ալաշկերտ անունը ստացել է Վաղարշակերտ (այժմ (Թոփրակ-կալէ) բերդից, որ աղճատվելով դարձել է Ալաշկերտ։

Բագրևանդը հեթանոս հայերի համար կրօնական մի սրբազան վայր է եղել։ Այստեղ գտնվում էր աստուածների քաղաք Բագաւանը Վանատուր և Ամանորաբեր աստուածների բագիններով և որմզդական անշէջ կրակի ատրուշանով։

Այս քաղաքը գտնվելով Արածանի սրբազան գետի ափին՝ հայոց համար նոյն նշանակութիւնն ունէր, ինչ որ այժմ ունի Բենարէսը՝ Գանգէսի ափին՝ հնդիկների համար։

Վաղարշ թագաւորը (Տրդատի պապը) Բագաւանի մօտ Վաղարշակերտ բերդը շինելով՝ հրամայեց, որ այնուհետև նոր տարվայ (Ամանորաբերի) գլխաւոր տօնախմբութիւնները, որոնք մինչ այդ Աշտիշատում էին կատարվում, կատարվեն Բագաւանում։

Ամանորաբերի կամ Նաւասարդի տօները հայերի համար նոյն նշանակութիւնն ունէին, ինչ որ յոյների համար օլիմպիական հանդէսները։ Այստեղ կատարվում էին ձիարշաւներ, մեծ զօրահանդէսներ, որոնց ներկայ էին գտնվում թագաւորները և նախարարները իրենց զօրքերով, գուսանները երգում էին հայ քաջերի սխրագործութիւնները, փառաբանում էին ոսկեմայր Անահիտին, տիկին Աստղիկին, կրակից և ջրից ծնված Վահագնին և այլն։

Միով բանիւ՝ այս հանդէսները այնպիսի շուքով էին կատարվում, որ Արտաշէս II թագաւորը, որի ժամանակ Հայաստանում մի թիզ հող անգամ անմշակ չը մնաց, մահվան անկողնում իր անցեալ ամբողջ փառքը յիշելով՝ միայն մի բան էր փափագում՝ մի անգամ եւս տեսնել Նաւասարդի առաւօտը, երբ թէ հարուստի և թէ աղքատի ծխնելույզներից ամպերի նման ծուխ էր բարձրանում, եղները վազում էին, եղջերուները վազում էին, զօրքերը փողեր էին փչում և թմբկահարում, և ապա մեռնել.

Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց,
Մեք փող հարաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորաց։

Բագաւանի բագինների հետ միասին մեծ է եղել և նրանց քրմապետների հեղինակութիւնը։ Այդ երևում է նրանից, որ յիշեալ Արտաշէս թագաւորը Բագաւանի քրմապետի պաշտօնը յանձնեց իր որդի Մաժանին։

Մովսէս Խորենացու ասելով՝ Բագաւանի քրմերը հայոց պատմութեան ժամանակագրութիւնն էին վարում, որից օգտվել է գնոստիկ Բարդածանը, կազմելով Արտաշէսի թագաւորութեան պատմութիւնը և հայոց հեթանոսական ծիսակատարութիւնների կարգը։ Այս գրքերը Խորենացու ժամանակ գոյութիւն են ունեցել, սակայն յետագայում կորել են։

Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ Բագաւանի բագինները կործանվեցին և նրանց տեղ շինվեց ս. Յովհաննէսի վանքը, որ այժմ կոչվում է Ուչ-քիլիսէ։

Ալաշկերտում բացի Բագաւանից և Վաղարշակերտից նշանաւոր է եղել Զարեհաւան քաղաքը, որը շատ հնաւանդական է՝ այս գաւառի ամենամեծ քաղաքն է եղել, որովհետև երբ պարսից Շապուհ թագաւորը IV դարում այդ քաղաքն առաւ, 5000 տուն հայ և 8000 տուն հրէայ գերի տարաւ, որից երևում է, որ Զարեհաւանը 100,000-ից աւելի բնակիչ է ունեցել։

Բագրեւանդը քրիստոնէական շրջանում եւս պահպանեց իր կրօնական նշանակութիւնը. այդ երեւում է նրանից, որ այնտեղ առաջնորդական պաշտօն են վարել հայկական հին գրականութեան այնպիսի լուսատուները, ինչպէս Մովսէս Խորենացին և Եզնիկ Կողբացին։

Իր կեանքի վերջին օրերն այստեղ անց կացրեց Սահակ Պարթեւը և մեռաւ Բլուր գիւղում։

Պատմական նշանաւոր անցքերից յիշատակութեան արժանի են հետեւեալները.

303 թ. Գրիգոր Լուսաւորիչը Բագաւանի մօտ Կեսարիայից վերադառնալով Տրդատ թագաւորին, նրա ընտանիքը, նախարարներին, զօրքերը և միլիօնաւոր ժողովուրդ մկրտեց Արածանի գետում։

392 թ. այստեղ Ջիրաւ դաշտում տեղի ունեցաւ հայոց և հռոմայեցոց միացեալ զօրքերի պատերազմը պարսից դէմ, որոնք Մեհրուժան Արծրունու դաւաճանութեան շնորհիւ Հայաստանին տէր դառնալով աւերել էին ու կործանել բազմաթիւ գաւառներ։

451 թ. Վարդանանց պատերազմը սկիզբն առաւ Զարէհաւան քաղաքում, ուր ժողովուրդը յարձակվելով մոգերի վրա՝ նրանց կոտորեց։

Այս կռւում հայերը յաղթող հանդիսացան և պարսիկներին Հայաստանից դուրս քշեցին։

VII դարում, երբ արաբացիք սկսեցին սաստիկ ճնշել հայերին, սրանք ապստամբեցին և Բագրեւանդի Վարդանակերտ գիւղում 692 թ. արաբացոց այնպիսի սոսկալի ջարդ տուեցին, որ, X դարի պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցու ասելով, 250 տարի անցնելուց յետոյ էլ արաբացիք սոսկալով էին յիշում այդ ջարդը և նզովում նրա հեղինակներին։

IX դարում, երբ սկսվեց Բագրատունի հարստութեան թագաւորութիւնը, Բագրեւանդն ընկաւ նրա իշխանութեան ներքոյ և այդ շրջանում նա յաճախ կռիւների ասպարէզ է հանդիսացել։ Այսպէս 910 թւին արաբները մտնելով Բագրեւանդ՝ առան Վաղարշակերտ բերդը և գաւառում մեծ աւերածութիւններ գործեցին։

X դարում, երբ Տայոց կիւրապաղատ Դաւիթն օգտվելով Ապահունեաց ամիրա Բատի մահից՝ գրաւեց Մանազկերտ քաղաքը, այս սաստիկ գրգռեց ժամանակակից մահմեդականներին, որոնք ահագին բազմութեամբ ժողովվեցին Բագրեւանդ գաւառը, ցանկանալով արշաւել Մանազկերտի վրա, բայց այստեղ վրա են հասնում Գագիկ թագաւորը և Դաւիթ կիւրապաղատն իրանց զօրքերով և ստիպում են նրանց ետ քաշվել։ Նրանք նահանջելիս աւերում են Բագրեւանդի արեւելեան մասը։

XI դարում Բագրատունեաց թագաւորութեան վերջանալովը Բագրեւանդն, ինչպէս և ամբողջ Արեւելեան Հայաստանը, ընկնում է նախ յոյների, յետոյ սելջուկների, թաթարների և ի վերջոյ օսմանցոց ձեռքը։

Երկարատեւ պատերազմների և քրիստոնէից դէմ յարուցված հալածանքի պատճառով երկիրը տակն ու վրա է լինում, աւերվում են հին հազարաւոր տարիների քաղաքակրթութեան կոթողները, հայ ազգաբնակութիւնը մասամբ գաղթում է և մասամբ կոտորվում։ Այսպիսի դրութեան մէջ էր երկիրը, երբ 1877 թ. ռուսները գրաւեցին Ալաշկերտը. բայց այդ գրաւումը շատ կարճատեւ եղաւ և տեղական հայ ազգաբնակութիւնն իր կեանքը փրկելու համար գաղթեց Կովկաս։ Յուսանք, որ ռուս զօրքերի այս անգամվայ գրաւելը վերջնական կերպով կազատէ հայ ժողովուրդը դարաւոր տառապանքից։

Ե. Վարդանեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 մայիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Շավէլի շրջանում մեր զօրքերը երկար տարածութեամբ գրաւում են Վինդավա, Վէնտա և Դուբիսսա գետերի զօրագիծը։ Վերջինի ստորին հոսանքում մեր ռազմաճակատը բաւականին տարածվում է դէպի արեւմուտք։

Գալիցիայում մենք ստիպեցինք թշնամուն մեր հակայարձակումներով աստիճանաբար ինքնապաշտպանութեան դիմել համարեա ամբողջ զօրաճակատում։

Դնէստրի ձախ ափի մօտով մայիսի 9-ի գիշերը սկսած մեր առաջխաղացումը զարգացաւ հետեւեալ օրվայ ընթացքում մեծ աջողութեամբ, չը նայած թշնամու հակայարձակումներին։ Մենք գրաւեցինք կռւով Նօվայա և Ստարայա Ժուրնիցէ գիւղերը, նաև ուրիշ երեք գիւղ, գերելով օրվայ ընթացքում աւելի քան 2200 գերի և 40 օֆիցէր, ձեռք ձգելով մի քանի տասնեակ գնդացիր և շատ պատերազմական պէս-պէս աւար։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

10—11 մայիսի

ՊԱՐԻԶ.— Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն. «Արրասի հիւսիսային շրջանում մի շարք անաջողութիւններից յետոյ գերմանացիք ամբողջ գիշեր յարձակումներ էին գործում, տեղ-տեղ մեծ յամառութեամբ։

«Նօտր-Դամ-դէ-Լօրէտ մատուռի հիւսիս-արեւելեան մասում մենք առաջացանք մի քանի հարիւր մետր և վերցրինք գերիներ։

«Նէվիլ-Սէնտ-Վաասի հիւսիսում մենք հանեցինք թշնամուն մի շարք խրամատներից»։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

«Բլանշվուայի մօտ մայիսի 8-ի երեկոյեան մեր զօրքերը գրաւեցին թշնամու բոլոր ամրութիւնները։ Լօրէտտի մօտ տեղի ունեցաւ մեծ արիւնահեղ ճակատամարտ, որ տեւեց 13 օր և վերջացաւ մեր կատարեալ փայլուն յաղթութեամբ։ Մենք այդ կռիւների ժամանակ ոչնչացրինք աւելի քան 3000 գերմանացու և գերեցինք 1000 հոգու։ Թշնամին մեր ձեռքում թողեց մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Բացի այդ՝ մենք գտանք մեծ թւով գնդացիր և հրացան խրամատների մէջ։ Մեր հերոս հետեւակ գնդերը կրեցին մեծ կորուստներ, բայց մեր զօրքերը տարան յաղթութիւնը շնորհիւ զարմանալի քաջութեան, եռանդի ու փոխադարձ օգնութեան, որ նրանք երեւան հանեցին ձեռնամարտի ժամանակ, երբ բոլոր զօրամասերն իրար խառնվեցին։ Սակայն թշնամու անաջողութիւնը կը թողնէ մեծ տպաւորութիւն նրա զօրքի շարքերում»։

ԻՏԱԼԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ

(Պետ. Հեռ. Գործ.)

9—10 մայիսի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վիէննայի իտալական դեսպան դուքս Ավարնան ցերեկով յանձնեց արտաքին գործերի մինիստր բարօն Բուրիանին պատերազմ յայտարարող նօտան։

ՀՌՈՄ.—Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է, որ Իտալիան իրան համարելու է պատերազմողի դրութեան մէջ Աւստրօ-Ունգարիայի դէմ՝ մայիսի 11-ից։ Աւստրիական դեսպանը ստացաւ իր անցաթղթերը կէսօրվայ ժամը 3 ու 30 րոպէին և մեկնելու է Հռոմից երեկոյեան կամ վաղը՝ առաւօտեան։ Վիէննայից կանչված է իտալական դեսպանը։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Վիէննայից հեռագրում են, որ այնտեղ հրատարակվեց Ֆրանց-Յովսէփ կայսրի հրովարտակը՝ Իտալիային պատերազմ յայտարարելու մասին։

ՀՌՈՄ.—Արտաքին գործերի մինիստրը մի նօտայով իրազեկ արաւ արտասահմանում պաշտօնավարող իտալական ներկայացուցիչներին աւստրօ-իտալական յարաբերութիւնների և այն մասին, որ թագաւորական կառավարութիւնը, նկատի առնելով այն ամենը, ինչ տեղի ունեցաւ, և գտնելով աջակցութիւն պարլամենտի քուէարկութեամբ ու երկրում տեղի ունեցող հանդիսաւոր ցոյցերից, վճռեց այլեւս չը յապաղել և այսօր և եթ յայտնեց թագաւորի անունից Հռոմի աւստրօ-ունգարական դեսպանին, որ համարում է իրան, սկսած մայիսի 11-ից, պատերազմող Աւստրօ-Ունգարիայի դէմ։

Նման պատուիրագրութիւն ուղարկվեց երէկ՝ հեռագրով նաև Վիէննայի իտալական դեսպանին։

ՊԱՐԻԶ.— Զինւորական մինիստրը դիմեց գեներալ Ժօֆֆրին և Գուրօյին հետեւեալ հեռագրով. «Մենք ստացանք Հռոմի մեր դեսպանից հեռագիր այն մասին, թէ Իտալիան պատերազմ է յայտարարել Աւստրօ-Ունգարիային։ Մեր զօրքերը խանդավառութեամբ կընդունեն մեր լատին քրոջ հանդէս գալու տեղեկութիւնը։ Հաւատարիմ իր փառաւոր պատմական անցեալին, Իտալիան հանդէս է գալիս, որպէսզի մեր դաշնակիցների հետ միասին և մեզ հետ առաջ տանէ բարբարոսների դէմ՝ յանուն քաղաքակրթութեան մղվող կռիւը։ Դիմելով մեր անցեալ և ապագայ զինակից եղբայրներին սրտագին բարեմաղթութիւններով, մենք ողջունում ենք նրանց միջամտութիւնը իբրև վերջնական յաղթութեան նոր գրաւական»։

ՀՌՈՄ.—Շվէյցարիայից տեղեկացնում են, որ բաւարական զօրքերը բանակել են Տիրոլում՝ Տրէնտինոյի մօտ։ Կարծում են, որ Իտալիայի դէմ կենտրոնացել են 100,000 բաւարական և ունգար զինուոր։

ՊԱՐԻԶ.—Բազէլից հաղորդում են, որ Վօլֆի գործակալութիւնը հրատարակել է գերմանական կառավարութեան պաշտօնական նօտան, որի մէջ ասված է՝ թէ, մնալով հաւատարիմ Աւստրօ-Ունգարիայի հետ կապած իր պայմանագրին, չը սպասած երրորդ դաշնակցի յարձակմանը, գերմանական կառավարութիւնը հրամայեց Իտալիայում պաշտօնավարող իր դեսպան իշխան Բիւլովին մեկնել Հռոմից աւստրօ-ունգարական դեսպանի հետ միասին։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վիէննայից պաշտօնապէս հեռագրում են. «Տրիէստի և Գօրիցի համայնական խորհուրդները արձակվեցին կայսերական հրովարտակով»։

ՀՌՈՄ.—Ցերեկվայ ժամը 12-ին պաշտօնապէս յայտարարվեց.

Այստեղ նախատեսում էին, որ պատերազմ յայտարարելուց անմիջապէս յետոյ սկսվելու են ագրեսիվ գործողութիւններ թշնամու կողմից, ուղղված Ադրիատիկ մեր ծովափի դէմ՝ ասել մորալ ազդեցութիւն գործելու նպատակով։ Այդ պատճառով մենք ձեռք էինք առել նախազգուշական միջոցներ, որպէսզի ըստ հնարաւորութեան կարճենք այդ ագրեսիվ գործողութիւնների ժամանակը։ Ցիրաւի, թշնամու փոքր ռազմանաւեր այսօր առաւօտեան ժամը 4-ից մինչև 8-ը ռմբակոծութեան ենթարկեցին Ադրիատիկ մեր ծովափը, իսկ թշնամու աէրօպլանները փորձեցին ռումբեր նետել Վենետիկի զինապահեստի վրա։ Կարճատեւ ռմբակոծութիւնից յետոյ թշնամու ռազմանաւերը ստիպված էին նահանջել, իսկ աէրօպլանները ենթարկվեցին յատուկ աէրօպլաններ ոչնչացնելու դրված թնդանօթների կրակին։ Ցարձակման ենթարկվեցին հետեւեալ տեղերը.—Պօրտօ-Կօրսինի, Անկօնա և Բարլէտտա։ Թշնամու աէրօպլանները ռումբեր նետեցին նաև Գէզիի դիրիժաբլների պահեստատեղի վրա, բայց ապարդիւն։ Ուրիշ պատերազմական գործողութիւններ այդ գիշեր տեղի չունեցան։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վօլֆի գործակալութիւնը հաղորդում է Բեռլինից, որ երէկ կէսօրվայ ժամը 5-ին, Հռոմի արտաքին գործերի մինիստրութեան շինութիւնը եկաւ գերմանական դեսպանատան խորհրդատու Հինդէնբուրգը և խնդրեց տալ իշխան Բիւլովի անցագրերը։

Աւստրօ-իտալական դիւանագիտական յարաբերութիւնների խզման պատճառով, Բիւլովը դեսպանատան բոլոր պաշտօնեաների հետ, Կվիրինալի բաւարական դեսպանը և Վատիկանում պաշտօնավարող պրուսական ու բաւարական դեսպանները այսօր երեկոյեան մեկնում են Հռոմից։

Հռոմի լրագիրների ասելով, գերմանական իշխանութիւնները շվէյցարական սահմանում բռնել են 30,000 իտալացի, որոնք վերադառնում էին հայրենիք։ Աւստրիան բռնել է մի քանի գնացք հայրենիք վերադարձող իտալացիներով։

ՀՌՈՄ.—Երէկ առ. ժամը 8 և 45 րոպէին թագաւորն ընդունեց բոլոր մինիստրներին՝ հրովարտակները ստորագրելու համար, յետոյ զինւորական մինիստր գեներալ Ցուպպէլին և ծովային մինիստր ծովակալ Վիալէին միասին պալատում թագաւորի հետ խորհրդակցելու համար, որը տեւեց մի ժամ։ Գիշերը զինւորական մինիստրութեան մէջ կայացաւ ծովային և զինւորական մինիստրների խորհրդակցութիւնը զօրքի գլխաւոր շտաբի պետ գեներալ Կադօրնի և ծովային շտաբի պետ ծովակալ Տաոնդիրեւէլի մասնակցութեամբ։

ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 մայիսի

ԱԹԷՆՔ. — Խօսելով Իտալիայի հանդէս գալու մասին, օպպօզիցիօն «Պատրիս», «Էստիա» և «Կեազէլաս» լրագիրները քննում են այդ միջամտութիւնը իբրև վերին աստիճանի ցաւալի դէպք յոյն ազգային ձգտումների տեսակէտից։ Ընդհակառակն, «Նէաչմէրա», «Նէապատրի», «Խրօնօս», «Էմբրօս» և «Ակրի» թերթերը կարծում են, որ Իտալիայի հանդէս գալը չէ կարող անմիջական ազդեցութիւն գործել Յունաստանի շահերի վրա։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Մայրաքաղաքը ցնծութեամբ ընդունեց Իտալիայի հանդէս գալու տեղեկութիւնը։ Բազմահազար ամբոխի բուռն ցոյցերը և օվացիաները իտալական դեսպանին և ողջոյններ նոր դաշնակիցներին սկսվեցին գիշ. ժամը 1 ին մօտ։ Տօնական տրամադրութեամբ ամբոխը սկսեց ժողովվել սկզբում Նէվսկի պրօսպէկտի և Սադօվայա փողոցի անկիւնում, ուր կախված էին հեռագիրներ Իտալիայի հանդէս գալու մասին։ Ամբոխի մէջ երեւացին ռուսական և իտալական դրօշակներ, լսվեցին աղաղակներ «Կեցցէ Իտալիան»։ Շուտով լոյս տեսան մի քանի ցերեկվայ լրագիրների հերթական յաւելուածները, նաև երեկոյեան լրագիրները պատերազմի յայտարարութեամբ։

Ցուցարարները դրօշակներով անցան Նէվսկի պրօսպէկտով և Մօրսկայա փողոցով, դիմեցին դէպի իտալական դեսպանատուն։ Դեսպանատան շինութեան պատշգամբն ելաւ իտալական դեսպան մարկիզ Կարլօտտին դեսպանատան բոլոր պաշտօնեաների հետ։ Օդը թնդաց «Ուրա, էվիվա Իտալիա, կեցցէ Իտալական ժողովուրդը, կեցցէ իտալական զօրքը» բացականչութեամբ։ Ի պատասխանի ամբոխի ողջոյնին, իտալական դեսպանը պատշգամբից շնորհակալութիւն յայտնեց և պատասխանեց բարձրաձայն՝ «Կեցցէ Թագաւոր Կայսրը, կեցցէ Ռուսաստանը և ռուսաց զօրքը»։

Ցուցարարներն անցան նաև դէպի Անիչկովեան պալատը։

Ապա երեկ. ժ. 6-ի մօտերը մի քանի տասնեակ հազար հոգուց բաղկացած ամբոխը դիմեց Ձմերային Պալատի կողմը, երգելով «Տէր, պահեա զԿայսրն մեր» և «Коль славенъ». Հրապարակով անցնող իտալական դեսպանը դարձաւ բուռն օվացիայի առարկայ։

Բուռն ցոյցերը շարունակվեցին մինչև ուշ երեկոյ։ Ահագին ամբոխը դիմում էր դէպի իտալական դեսպանատան կողմը։ Միտինգների ժամանակ հռետորները ընդգծեցին դէպքերի պատմական կարեւորութիւնը։ Իտալական խանութների պատուհանները զարդարված են Թագաւոր Կայսրի և Վիկտոր Էմմանուէլ թագաւորի պատկերներով։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 մայիսի

ՍԱԼՈՆ.—Զինւորական մինիստրը հեռագրեց զօրաբանակների հրամանատարներին, որ յունաց կառավարութիւնը վճռել է չարձակել զօրքի շարքերում գտնվող պահեստի զինւորներին։

ԱԹԷՆՔ.—Թագաւորի հիւանդութիւնը և արտաքին քաղաքականութեան դէպքերը չափազանց յուզել են հասարակական կարծիքը։ Երէկ թագաւորին ենթարկեցին անդամահատութեան, որից յետոյ տաքութիւնը հասաւ 40°-ի։ Վճռված է կանչել պրոֆ. Կրաուսին։ Այսօր տաքութիւնը 39,1° էր, երեկոյեան—37,°։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Իտալիայի հանդէս գալուց յետոյ Ռումինիան անկարող է ձեռքերը ծալած նստել։ Ներկայումս Ռումինիայում տեղի են ունենում ժողովրդական միտինգներ և ցոյցեր, որոնց ժամանակ հռետորները պահանջում են, որպէսզի Ռումինիան ժամանակ չը կորցնէ և ժամ առաջ միանայ երրեակ համաձայնութեան։ Մի հօսանք միայն կողմնակից է Ռումինիայի հանդէս գալուն միմիայն Բուլգարիայի հանդէս գալուց յետոյ, որովհետև նշաններից երեւում է, որ վերջինս պատրաստվում է միանալ Գերմանիայի և Աւստրիայի, ինչպէս նաև Թիւրքիայի հետ։ Ռումինական թագաւորը շարունակ խորհրդակցում է մինիստրների հետ։ Լուրերի համաձայն, կայացված են կարեւոր վճիռներ, որոնք սակայն գաղտնի են պահվում։

◆ Յունաստանում եւս սկսվել են խռովութիւններ։ Յոյն ազգային կուսակցութիւնը պահանջում է զօրքեր ուղարկել Թիւրքիայի դէմ և ուժեղացնել դաշնակիցների ցամաքային ույժերը։ Ամենաստոյգ աղբիւրներից տեղեկացնում են, որ Վենիզէլոսը շուտով վերադառնալու է իշխանութեան գլուխ, որից յետոյ Յունաստանի հանդէս գալու՝ հարցը յօգուտ դաշնակիցների կը դառնայ միայն օրվայ խնդիր։

◆ Պերեմիշլից Կիէվ են տարել 244 թնդանօթ և մի քանի պաշարիչ թնդանօթ։

◆ Լէհերին օգնող ամերիկական կոմիտէտը ստացել է մի նամակ լեհ երգիչ Էդուարդ Ռեշկէից, որ հաղորդում է, թէ իր վիլլան Լեհաստանում քանդվել է և աւերվել, իսկ ինքը իշխան և իշխանուհի Լիւբոմիրսկիների հետ ապրում է նկուղում։

◆ «В. В.»-ի տեղեկութիւնների համաձայն, Բուլգարիայում ամբողջ ազգաբնակութիւնը և ռուսասէր օրգանները պահանջում են, որպէսզի Բուլգարիան հանդէս գայ անմիջապէս։

◆ Շվէյցարիան, շարունակելով չէզոք մնալ, կենտրոնացրել է խոշոր ույժեր գերմանական և իտալական սահմաններում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

Նիւսարուի (Պարսկաստ.) նուիրատուների
(Յօգուտ հայ փախստականների)
(Տես «Մշակ» № 88)

«Հախնազարեան, Սիմոն, Ներսէսեան և Ընկ.» և եղբ. Տէր-Մկրտչեան 12-ական ր., Մ. Գրիգորեան և С. Мюлукъ 10-ական ր., Ո. և Հ. Յարութիւնեան, Ս. Գեանջեցեան և Ընկ. 6 ր., Առաքել 5 ր., Հրահատ 4 ր. 20 կ., Արտէմ 3 ր., Աբրահամ Ա. Սարգսեան և Y 2-ական ր., Գ. Բէջեան 80 կ.։ Գումարն է 69 ր., որից 25 կ. ծախսված է փոստային փոխադրութեան համար և խմբագրութեանս ուղարկված 68 ր. 75 կ.։

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՆՔ ԱՅԺՄ

Պատմական Հայաստանի սիրտը՝ Վան-Տօսպը գրաւված է։ Ռուսական բանակը, հայ կամաւորների հետ, 4 ուղղութեամբ մուտք է գործել պատմական Վասպուրականի նահանգը, ներկայ Վանի վիլայէթը, և նրա հիւսիսային ու արեւելեան մասերին միանգամայն տիրապետել է։

Վերջին հեռագիրները մեզ աւետեցին Բաշկալէի, Սարայի, Մանազկերտի ու մինչև անգամ Բուլանըխի գաւառի Կոփ աւանի գրաւումը։ Վերջինս Մանազկերտից դէպի Մուշ ձգվող ճանապարհին է և հազիւ 40—50 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում Մուշից։

Այս գրաւումներով թիւրքահայ ժողովրդի ազատագրութեան գործը նոր փազի մէջ է մտնում։

Այժմ իրերի դրութեան նոր բերմունքով՝ հայ հասարակութեան բոլոր խաւերի առաջ ցցվում, ծառանում է այն հարցը, թէ ինչպէս անել, որ այդ գրաւումները տեւական լինեն և ապա՝ թէ ինչ միջոցներ ձեռք առնել, որպէսզի կարելի լինի շուտափոյթ օգնութեան հասնել Թիւրքաց Հայաստանի միւս վայրերում վտանգի ենթարկված հայ և այլ այն ժողովուրդներին, որոնք մինչև այժմ կրել են թիւրք բռնապետական ռեժիմի ամենածանր, ամենաանողոքելի լուծը։

Ահա այս հարցն է, որ պիտի զբաղեցնի փոքրից մինչև մեծը, ամենաաղքատից մինչև ամենահարուստը։

Մեր կարծիքով՝ այլ եւս ոչ թէ միայն ժամավաճառութիւն է տեսական հարցերի մասին վիճելը, այլ և յանցանք է րոպէ իսկ յապաղելը։

Եթէ կան անհատներ, խմբեր, որոնք տաքտիկական տեսակէտից տարակարծիք են [illegible] ներկայիս գործնականութեան եղանակի հետ, այդպիսիները, մեր կարծիքով, ապագային թողնելով հարցերի քննութիւնն ու եզրակացութիւններն հանելը, շտապելու են՝ ինչով որ կարող են՝ օգնութեան փութալու մօրթվելու վտանգին ենթակայ ժողովուրդներին։ Այո, այլ եւս վէճի ժամանակը չէ, գործի, ակտիվ գործի ժամանակ է։

Եւ ահա այդ տեսակէտից առաջնորդված, այսօր, այս վեհ ու տխրական րոպէին, մեզանից ամեն մէկը, պիտի մտածի, պիտի ամեն ջանք գործ դնի գրաւված նոր դիրքերը ձեռքից բաց չը թողնելու։

Մի րոպէ իսկ ենթադրել, թէ կարելի է ձեռք բերվածը ետ տալ, այդ նշանակում է մեր ձեռքով, մեր իսկ համաձայնութեամբ Վասպուրականն ու ամբողջ Թիւրքաց Հայաստանը կամովին յանձնել թիւրք և քիւրդ վանդալներին, գազանացած հորդաներին։ Ո՛չ, երբէք, մի անգամ այս ճանապարհի վրա կանգնելուց յետոյ՝ այլ եւս ետ գնալ նախ անկարելի է, ապա և նշանակում է յանցանք գործել, ոճրագործ լինել։ Ո՛չ, այլ եւս ետ նայելու, նահանջի մասին մտածելու տեղն ու ժամանակը չէ. այս տաքտիկայի տրամաբանական հետեւանքը լինելու է առաջ, միշտ առաջ։

Մենք, անշուշտ, այնչափ միամիտ չենք, որ կարծենք, թէ մեր գործը շատ է հեշտ. ոչ, մենք գիտենք, որ մեր պարտուած թշնամին՝ արիւնարբու թիւրք բռնակալութիւնը դեռ բոլորովին ուժասպառ չէ եղել, դեռ այդ եօթգլխանի իժի բոլոր գլուխները չեն ջարդված և որ նա դեռ կարող է շատ ու շատ կեանքերի մահ սպառնալ, դեռ շատ ու շատ շէն ու պայծառ քաղաքներ ու շէնքեր քարուքանդ անել. այո, գազանը աւելի է վտանգաւոր իր հոգեվարքային դրութեան մէջ. նա ընդունակ է իր հոգու ամբողջ մաղձը, թոյնը թափել թոյլերի ու խեղճերի գլխին ու իր փլատակների տակ թաղել և նրանց։ Ուրեմն։

Ուրեմն այս բոլորը պիտի աչքի առաջ ունենալ և քանի դեռ ուշ չէ՝ պէտք է գլխաւոր ճարը տեսնել։

Կարճ ասած՝ պէտք է հրապարակ հանել բոլոր այն երիտասարդ ու անձնազոհ ույժերը, որոնք ընդունակ են ռազմի դաշտ դուրս գալու, կամաւորների լէգէօնները պիտի տարածվեն Արաքսից մինչև Եփրատ, Տաւրոսից մինչև Պոնտոսեան սարերը։

Իսկ անձնազոհ մարտիկների զինման, պատսպարման գործը պէտք է չափազանց արագ կատարել։ Րոպէն շատ է թանգ. մանր, չորչափական հաշիւների ժամանակը չէ, պէտք է բացվեն քսակները առատօրէն. շքեղ պալատներում ապրող հայ մեծատուները թող գէթ այս անգամ ցոյց տան, որ մեռած չէ ընդ միշտ իրանց կրծքի տակ գտնվող սիրտը, որ ի դէպ պիտի տրոփել, մղկտալ. րոպէներ կան, ուր մարդկային կեանքի իդէալը գլխովին գերազանցելու է մերկանտիլ նիւթը։ Այսօր այդ օրերն են։

Ահա շուտով լրանում է տարին, երբ սուրը պատեանից դուրս է հանվել. բայց չը տեսանք մի հայ մեծատան նշանակալից մի օգնութիւնը. մեր տասնեակ միլիօնատէրերից և ոչ մէկը դեռ ցոյց չը տուեց այնպիսի սիրտ, ինչ հայ գիւղացիութիւնն ու աշխատաւորութիւնը երևան հանեցին. սրանցից մինը իր օջախի դռներն է լայն բացել իր դժբաղդ փախստական եղբայրներին գրկաբաց ընդունելու, միւսը իր կեանքն է դրել, արիւնով ներկվել. իսկ ինչ են տուել միլիօնների կոյտի մէջ թաղվածները։ Ոչինչ կամ շատ չնչին բան։

Նիւթ է պէտք՝ պիտի գտնել. կուռք է պէտք՝ պիտի դուրս բերել։ Մի խօսքով՝ պիտի գործ դնել գերմարդկային ճիգ՝ օգտվելու այս պատեհ առիթից, պահելու ձեռքում այն բոլոր դիրքերը, ինչ ձեռք են բերվել, և բոլոր հնարաւոր միջոցները՝ նորանոր դիրքերի տիրանալու և հասնելու օգնութեան ամբողջ Թիւրքաց Հայաստանի ճնշված, տանջված ու խողխողման վտանգին ենթակայ ժողովուրդներին։

Պէտք է լարել ուժերը, պէտք է ցոյց տալ քաղաքացիական հասունութիւն։

Ահա թէ ո՛րն է այսօր և այսուհետև բռնելիք մեր ճամբան և ի՛նչ ենք անելու մենք՝ նպաստելու համար թիւրք բռնակալութեան անհագնադղորդ և ժամ առաջ տապալումին, և ազատելու գազանի ճիրաններում օրհասական ճիգ թափող ժողովուրդներին։

Գրիվարդ

ՄՏՔԵՐ ԵՒ ԽՈՀԵՐ

V

Ինչպէս ասացինք, մեր դերասանական ոյժերի մեծ մասի պառակտման պատճառը Լէօյի վէպից փոխադրված «Մելիքի աղջիկը» պիէսի ներկայացման շուրջը տեղի ունեցած վէճն էր։

Փաստ է, որ մի խումբ դերասանների և Լէօյի միջև ծագեց մեծ անբաւականութիւն, որ հասաւ մինչև իսկ թշնամութեան։ Երկու կողմերն էլ ամենայն ոյժով պաշտպանում էին իրանց վիճելի դարձած իրաւունքները և ամենայն յամառութեամբ պնդում՝ մէկը՝ թէ ներկայացման իրաւունքը իրանն է, միւսը՝ թէ իրանն է և ամեն միջոցի կը դիմէ խանգարելու այդ պիէսի ներկայացումը։ Շատ պարզ է, որ այդ դէպքում, ինչպէս և ընդունված է ամեն տեղ, պէտք էր դիմել միջնորդ, պետական դատարանի, պարզելու թէ ու՛մն է իրաւունքը և ո՛ր կողմն է արդարացի։

Սակայն այդ տեղի չունեցաւ և ահա թէ ինչ պատահեց. մի խումբ անձինք լրագրութեան մէջ հանդէս եկան և պաշտպանեցին մի կողմը, դատապարտելով միւս կողմին։ Այն էլ այդ արին շատ անվայելուչ ձևով։ Նրանց բողոք-յօդուածը լոյս է տեսնում կիրակի օր, իսկ երկուշաբթի նշանակված է պիէսի ներկայացումը, երկուշաբթի լոյս չէ տեսնում ոչ մի լրագիր և հակառակ կողմը հնարաւորութիւն չունէր պաշտպանելու իրան։ Այդ մի-երկու տասնեակ անձինք իրաւունք են համարում հրապարակով դատաստան անել, մեղադրել մի կողմին, հռչակել փոխադրութիւն-պիէսը հակա-գեղարուեստական, թէպէտ և ստորագրողներից ոչ մէկը չէր տեսել այդ պիէսը բեմի վրա, ինչպէս ասում են, առաջարկել բոյկոտի ենթարկել և այլն, և այլն...

Ասացէք խնդրեմ, որտեղ է ընդունված, որ հասարակութիւնը հանդէս գայ իբրև դատաւոր, այն էլ գրական-թատերական խնդիրների համար։ Մի՞թէ կարելի է ամբոխային դատավարութեանը նշանակութիւն տալ։ Չէ՞ որ մի այլ՝ 25—30 անձինք էլ կարող էին հրապարակ գալ և հակառակը պնդել, որովհետև այդ դէպքում իրաւունքը հասարակութեան ամեն մի խմբակի էլ հաւասարաչափ է պատկանում։ Եւ այդ բողոքող խմբակը իր հրապարակային բողոքով միմիայն արջի ծառայութիւն մատուցեց հեղինակ Լէօյին գրական էթիկայի տեսակէտից... Եւ ահա փոխանակ աշխատելու, որ ծագած վէճը մի կերպ վերջանար երկու կողմերի համար, որ պէտք էր ամեն կերպ համոզել դերասանական խմբակցութեան միանալ և ոչ թէ պառակտվել և բաժանվել զատ-զատ թշնամական խմբերի մինչ այն աստիճան, որ մի խմբի անդամները միւս խմբի անդամների անունն անգամ չեն ուզում լսել և փախչում իրարից հեռու — մեր հասարակութեան միջից մի խումբ անձինք եկան և կրակի վրա իւղ ածեցին։ Ստանձնեցին դատաւորի դեր և, ոչ պիէսը տեսած, ոչ էլ խնդիրը քննած, urbi et orbi հրապարակ հանեցին, յայտնի չէ ո՛ւմ համար և ո՛վ էր խնդրել նրանց, իրանց վճիռը՝ մի տեսակ անէծք Բագուից տեղս ժամանած դերասանական ընկերակցութեան հասցէին։

Այժմ, ինչպէս հաստատապէս տեղեկացանք, դերասանական ընկերակցութեան լիազօրը աւելի կանոնաւոր միջոցի է դիմել՝ ընդմիշտ վերջ տալու այդ տգեղ, մինչև իսկ խայտառակ բնոյթ ստացած վէճին։ Գործը անցել է դատարան։ Ահա միակ հեղինակաւոր մարմինը, որ կարող է քննել, դատել և դատապարտել մեղաւոր կողմին։ Դատական գործ է յարուցված հրապարակական բողոքի տակ ստորագրող անձանց դէմ։ Ուրեմն մօտ օրերս դատարանում քննվելու է մի շատ հետաքրքրական գրական-թատերական վիճելի գործի առիթով մի խումբ հասարակական դէմք ունեցող անձանց հրապարակով հանդէս գալու և իր veto-ն դնելու խնդիրը։

Կալխաս

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դպրոցական ցաւեր

Աչառ-Ջուր (Ղազախ), 28 ապրիլի

Դպրոցական գործը, որ տարեսկզբին գեղեցիկ, նոյնիսկ օրինակելի շաւղով սկսվեց Ղազախի շրջանի գիւղերում, չը պսակվեց իր լրմամբ մինչև ուսումն. տարվայ վերջը։

Սկսած մարտ ամսից դպրոցների վերջին դասարանները դատարկվեցին։ 10—12 տարեկան տղայ աշակերտութիւնը, ստիպված՝ տիրող դրութիւնից, գնաց կատարելու իր անելիք գործերը։ Այս հանգամանքներում, բնական է, դասարաններում ուսման սոսկալի անհաւասարութիւն առաջացաւ աշակերտութեան մէջ։

Զանցած մարտը, արդէն նրա վերջերին, երևան եկան շրջանիս կլիմային յատուկ զանազան տարափոխիկ հիւանդութիւններ։ Սրանք էլ երկրորդ կողմից սկսեցին քայքայել դպրոցի դասարանները։

Տկարութիւնների հոսանքը սկսվեց, դատարկվեցին դպրոցի դասարանները։ Բժշկական օգնութեան բացակայութեան պատճառով՝ հիւանդութիւնները ծաւալվել են անխտիր բոլորի ընտանիքներում։

Դպրոցների ուսուցիչները իրանց բողոքագրերով յայտնեցին դպրոցների վարչութիւններին դադարեցնելու ուսումը։ Ուշադրութիւն դարձնող չեղաւ։

—Ռոճիկ է ստանում, ուզում է պարապ նստի ուտի. սրանց տեսէք. երեխէքը մերը չե՞ն, թող կոտորվեն, իրանց ինչ։

Նման գռեհիկ պատասխաններ էին հնչում մեր՝ գրեթէ բոլոր դասատուների ականջներին։

Ի՞նչ կարող էք անել, երբ առանց վարչութեան արձանագրութեան բարձր իշխանութիւնը չի անի ոչ մի կարգադրութիւն։ Մնում է լռել և տանել նման ցաւալի դրութիւնը մինչև տարվայ վերջը։

Իսկ որ անմեղների շարքեր թողնում են այս աշխարհը դեռ չը ծաղկած հասակում, դրանով հետաքրքրվողներ անգամ չը կան։

Գիւղացու այս հոգեբանութիւնը շատ նման է այն հովի հոգեբանութեանը, որը կարմիր պղպեղ գնելով՝ ուտում է բերանը դաղդղելով. չէ՞ որ մարդը փող է վճարել, ինչո՞ւ ի զուր դէն գցի։

—Չէ՞ որ վարժապետը ռոճիկ է ստանում. ինչու փակենք։

Մի ասող լինի՝

—Ախար տուած ռոճիկդ ի՞նչ է, որ դրա պատճառով զրկվում ես քո սիրուն բալէքից։ Է՜հ, մախլաս...

Pauper

Ընթացիկ կեանքից

Մեծ-Ղարաքիլիսա, 6 մայիսի

Մեծ-Ղարաքիլիսան բնական տուրքերով օժտված մի ամառանոցավայր է, որի առաւելութիւնների մասին շատ է գրվել։ Իսկական հանգստութիւն փնտռողների համար այս գիւղը մի շատ նպատակայարմար վայր է. սա ապացուցված է և կասկածից դուրս։

Մի երկու ամիս առաջ խօսք կար այդ գիւղում տիֆային բարակ հիմնելու մասին, սակայն այդ պրօէկտը վերացված է՝ անշուշտ աչքի առաջ ունենալով ամառանոց գնացողների ապահովութիւնը։ Սրան փոխարինել է մի այլ հիւանդանոց, որը կարող է մի պլիւս լինել ամառանոցաւորների համար։ Այստեղ մօտ 50 մահճակալով հիւանդանոց է բացել Կարմիր Խաչի Ընկերութիւնը, ուր բացառապէս ընդունվում են պատերազմում վիրաւորվածները։ Հիւանդանոցի համար Գ. Շարբաթեանը Կարմիր Խաչի Ընկերութեան տրամադրութեան տակ է դրել ձրիապէս իր մի շինութիւնը, որը տարեկան 6—700 ր. քրէհ է բերում։

Խօսք չը կայ, ի հարկէ, որ հիւանդանոցի շնորհիւ տեղական երկու բժիշկների վրա կաւելանան նաև մի քանի նոր բժիշկներ, որը, ինչպէս յիշեցի, մեծ պլիւս կը լինի ամառողների համար։ Եւ ես հաւատում եմ, որ այս բարեպատեհ հանգամանքների շնորհիւ գիւղացիք իրանց փորձված և ինտելիգենտ տանուտէրի հետ միասին այս տարի աւելի քան սիրալիր վերաբերմունք ցոյց կը տան եկւորներին, հոգս կը տանեն գիւղի բարեկարգութեան, բնակարանների յարմարութեան և փողոցների մաքրութեան վրա։ Շատերի ջերմ ցանկութիւնն է, որ կամաց-կամաց այս գիւղը կուլտուրական և ցանկալի բարձրութեան հասնի։

Միք. սարկ.

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏ

Ալէքսանդրօպոլում

Երևան, 3 մայիսի

Ապրիլի 23-ի գիշերը ուղևորվեցի Թիֆլիսի կայարան։ Մի այդպիսի քաօս կեանքումս չէի տեսել։ Ամենքն են վազում, ամենքն են իրար հրհրում, բղաւոց, աղաղակ. ոչ ոք իրար չի հասկանում։ Հազիւ բարձրացայ վագօն։ Ոչ թէ նստելու, այլ կանգնելու հնարաւորութիւն չը կար։ Մարդ, կին, երեխայ, ծանրոցներ, կապոցներ իրար էին խառնվել։ Նստածը նստած, կանգնածը կանգնած էր մնում։ Կային և այնպիսիները, որոնք անկարող լինելով յոգնածութեանը յաղթել՝ ուղղակի փռվում էին յատակում։ Սրա վրա աւելացրէք օդի փոփոխութիւնը։ Քանի առաջ գնացինք, այդ եղանակ փոփոխութիւնը աւելի զգալի դարձաւ, և մինչև Սանահինին մօտենալը՝ սկսեց ձիւն տեղալ։ Ի՜նչ տարօրինակ երևոյթ, ապրիլի 24 և սառնամանիք։ Ձիւնի հաստ վերմակով ծածկվեցին շըրջակայ լեռները, և մինչև Ալէքսանդրօպոլին հասնելը՝ ձիւնն ու սառնամանիքը շարունակվեց։ Ցրտի աստիճանը հասաւ 5—6։

Ալէքսանդրօպոլի առաջին տպաւորութիւնը շատ աննպաստ էր։ Անանցանելի ջուր, ցեխ, փոս, դարիվայր փողոցներ։ Ով ուզում է աղիքների, ստամոքսների մասաժ ընդունել, թող Ալէքսանդրօպոլ շտապէ, էլ չեմ յիշում կողքեր ջարդելը։ Տները տեղական քարից, բարձր, ցածր, տափարակ կըտուրներով, տեղ, տեղ քարուքանդ, կիսատ, աւերակների տպաւորութիւն արին։ Իրերս ձգելով տեղս անհիւրընկալ յաջորդարանում, շտապեցի գործիս։ Մտայ գաղթականների օժանդակող գրասենեակը։ Այստեղ ժողովված էին կոմիտէտի շատ անդամներ։ Գործը եռում էր. խնդիրներ, կարգադրութիւններ, խորհրդածութիւն. այդ բոլորը լաւ տպաւորութիւն թողին։ Գործը եռում էր, կեանք, շարժում կար։

Այստեղ էին և գաղթականները... Այր, կին, քահանայ, երեխայ, հիւանդ, վիրաւոր՝ անհուն ցաւը սրտերին, ծանր վիշտը դէմքերին՝ այստեղ էին եկել, ժողովվել իրանց դարդերն ասելու, իրանց զուլումի ցաւը մեղմելու։ Ահա, այստեղ պատկերացաւ իմ առաջ թիւրքական դժոխքը իր սոսկումի արհաւիրքներով։ Եւ իմ առաջն էին այդ դժոխքի անբաղդ արտավիժվածները՝ նքթի, անօթի, պատառոտված, լքված, անտուն, անտիրական հարազատ օջախներից զրկված, հալածված... լքված... և դրանց անունը՝ թշուառութիւն...։ Ինչո՞ւ, ա՛խ, ինչու այդքան տառապանք, լլկումն, ա՛խ, ո՛ր մեղքերի համար, ո՛ր անիրաւ վարմունքի համար...։ Անտանելի է...։

Վերջապէս այստեղ յայտնեցի առաքելութեանս նպատակը։ Գովեստներ և շնորհակալութիւններ շռայլելով աստրախանցիների հասցէին, ներկայ եղողները ուրախութեամբ խոստացան աջակցել ինձ թէ քաղաքում և թէ գիւղերում բերածս իրերը բաժանելիս։

Այստեղ գաղթականներին օգնող կոմիտէտը բաղկացած է 26 հոգուց, որը բաժանվել է սեկցիաների. 1) գաղթականներին խնամող, 2) վիրաւորների, 3) կամաւորների, 4) գիւղական կազմակերպութիւնների, 5) հաշիւներ ստուգող, 6) վիճակագրական և 7) հանգանակիչ։ Ահա, այդ բոլորը միասին՝ թև թևի տուած՝ օգնում են գաղթականական գործին հետևեալ ծրագրով. նախ՝ գաղթականներին պատսպարել են քաղաքում և գիւղերում։ Քաղաքում հանրակացարանների թիւը 15 է, իսկ մասնաւոր տներին, ուր բնակվում են 1—5 հոգի, հասնում է մօտ 200-ի։ Գիւղերը բաժանված են րայոնների։ Իւրաքանչիւր կենտրոնական գիւղում կան լիազօրներ և պահեստատեղիք, ուր հաւաքվում են հագուստները և պաշարեղէնները և շրջակայ գիւղերից փախստականները գալիս են նպաստ ստանալու։ Դրանց մէջ կան այնպիսի փախստականներ, որոնք ունեն իրանց սեփական սայլերը, գալիս են քաղաք կամ կենտրոն և իրանք են հասցնում հարկաւոր իրերը փախստականներին։ Բացի այդ՝ փախստականներին տալիս են իւրաքանչիւրին օրական $1\frac{1}{2}$ ֆունտ ալիւր և 3 կոպ. «приварка»-ի անունով։ Ունեն նաև շրջիկներ, որոնք շրջում են գիւղէ գիւղ վերահսկելու կանոնաւոր մատակարարման գործին։

Ալէքսանդրօպոլում և նրա շրջակայքում փախստականների թիւը հասնում է մօտ 8000-ի։ Քաղաքում ապրում են 3000, իսկ գիւղերում՝ մօտ 4700։ Մեծ մասը հայեր են—6000, ասորիներ՝ 30, յոյներ՝ 1400։ Թուրքեր չը կան. ասորիները գաղթել են Թիֆլիսի նահանգը։ Դրսի փախստականները տեղաւորված են 70—80 գիւղերում, որոնց օգնութեան են հասնում ոչ միայն քաղաքի շրջիկները, այլ և գիւղական ուսուցչուհիներն ու ուսուցիչները։

Բացի այդ՝ կոմիտէտը պահում է քաղաքում նաև մի հիւանդանոց 60 հոգու համար, որը առ այժմ փակ է, այնտեղ բծաւոր տիֆ յայտնվելու պատճառով, և սակայն որը այս օրերս նորից բացվելու է։ Տիֆը առանձնապէս մեծ չափեր չէ ընդունել Ալէքսանդրօպոլում. հիւանդները մեծ մասամբ առողջացել են. միայն 3—4 մահ է եղել։ Բժիշկների ասելով, տիֆը այստեղ ներմուծել են Երևանից եկած փախստականները։

Փախստականներին օգնելու համար Ալէքսանդրօպոլի կոմիտէտը անցեալ տարվայ նոյեմբերի 10-ից մինչև օրս հետևեալ գումարներն է ստացել։

Էջմիածնից և քաղաքների միութիւնից՝ 35,000 ր., Ալէքսանդրօպոլ քաղաքից՝ 4000 ր., Կարսի նահանգապետից՝ 8000 ր., Երևանի նահանգապետից 17,000 ր.։ Ընդամենը 64,000 ր.։

Որպէս ծանօթութիւն պիտի ասեմ, որ վերոյիշեալ նահանգապետներին այդ դրամները ուղարկում է Թիֆլիսի նահանգական կոմիտէտը՝ նախագահութեամբ կոմսուհի Ելիզավետա Անդրէևնայի, որ օժանդակում է կովկասեան պատերազմից վնասվածներին ընդհանրապէս։

Պէտք է խոստովանել, որ այսօր Ալէքսանդրօպոլի գործունէութիւնը փախստականների վերաբերեալ կենտրոնացած է յիշեալ գաղթականական սեկցիայի ձեռքում, որը պատւով տանում է գործը և որը բաղկացած է հետևեալ անձերից.

Նախագահ՝ Աստուածատուր Իսահակեան, փոխ-նախագահ՝ Պ. Գինջեան, անդամներ՝ Ց. ք. Խաչվանքեան, Ա. Կարանեան, Մ. Տէր-Յարութիւնեան, Ս. Թօփալեան, Պ. Մաճաւեան, Պ. Բեբուրեան, Վ. Արաբաջեան։

Իսկ հանրակացարանների վերահսկողութեան նախագահուհին է տիկ. Տէր-Մարտիրոսեան։ Որքան Ալէքսանդրօպոլի արտաքինը անմխիթարական էր ինձ համար, նոյնքան ազնուրէն, մխիթարական և ջերմ էր այդ խմբի վերաբերմունքը, մանաւանդ նրա ծերունի, համակրելի նախագահ պ. Իսահակեանը. սակայն պաղ ու մռայլ էր յաջորդարանը...։

Գէորգ ք. Մկրտումեան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

IV

Մոսկվա, 3 մայիսի

«Մի բաժակ թէյ» անուան տակ Մոսկվայի հայերի ընկերութիւնը, ապրիլի 30-ին, «Սլավեանսկիյ բազարում» հաւաքել էր տեղական հայ հասարակութեան ստուար բազմութիւն։

Չը նայած որ այդ երեկոյի համար ոչ մի նախնական ծրագիր չէր կազմված, այնուամենայնիւ երեկոյթը ունեցաւ մեծ աջողութիւն։

Արտասանվեցին մի շարք ճառեր մեր ներկայ մոմենտի շուրջը, կարդացվեցին մի քանի ոտանաւորներ, երգվեցին երգեր և այդ բոլորից զգացվում էր այնպիսի տաք սէր և փափուկ զգացմունք առ միմեանս, որ մեզանից իւրաքանչիւրը ակամայից հարցնում էր իրան.

— Մի՞թէ սա մենք ենք։

Ինժ. Ս. Թառայեանը, որ Հ. Կոմիտէտի կողմից ուղարկված էր Կովկաս փախստականների դրութիւնը ուսումնասիրելու համար, ժողովականներին հաղորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնութիւնը և զգացված շնորհակալութիւնը այն ուշադրութեան համար, որ տեղիս գաղութը տածում է դէպի մեր փախստականներն ու կամաւորները։

Ներկայ եղողները յոտնկայս լսեցին հայրապետական այդ օրհնանքը։

Վ. Տոտոմեանը իր զգացված ճառով նըկարեց ներկայ մոմենտի լրջութիւնը և շեշտեց այն հանգամանքը, որի դժուարութիւնների տակ ծնունդ առաւ ներկայ ընկերութիւնը։

— Մեզանում,—ասաց նա,—սովորութիւն է դարձել իւրաքանչիւր նոր գործի սկզբում յիշել անցեալ անաջողութիւնները և դրանց տալով գերագոյն նշանակութիւն՝ պեսսիմիստ հայացքով նայել մեր ապագային։ Այսօր եկել է ժամը, երբ այդ անցեալ ձախորդութիւնները մեզ յուսահատեցնելու փոխարէն պէտք է աւելի խրախուսող լինեն դէպի մեր առաջիկայ գործունէութիւնը, և մենք այդ ձախորդութիւնների փլատակների վրա պէտք է կանգնեցնենք հայ կուլտուրականութեան լուսատու ջահը։ Թող այն բոլոր խոչընդոտները, որոնք գոյութիւն են ունեցել մեր մէջ մինչև օրս, իբրև հողը պարարտացնող աղբ, պարարտացնեն մեր հոգին և մտքի կարողութիւնը, որպէսզի վաղը կարողանանք այնտեղ ծաղկեցնել ոչ թէ միայն կանաչազգեստ մարգագետիններ, այլ և ծառեր իրանց քաղցրահամ պտուղներով։ Միացէք, հայեր, և մեկնեցէք միմեանց ձեր բարեկամական ձեռքը։

Այնուհետև, բոլորից սիրված և յարգված բանաստեղծ Ալ. Ծատուրեանը որոտընդոստ ծափերի տակ բարձրանում է բեմ և կարդում իր վերջին ոտանաւորներից երկուսը, որոնք ուժեղ տպաւորութիւն են թողնում։

Պ. Կ. Կորոտկովը կարդում է Իւ. Վեսելովսկիի «Арменія» ոտանաւորը և իր բանաստեղծութիւններից մի քանիսը ռուսերէն լեզուով։

Սուխոդոլսկիյ թատրոնի երգիչ պ. Կարատովը (Կարապետեան) երգում է մի քանի երգեր տիկ. Ն. Մէլիք-Բէգլարեանի նուագակցութեամբ։

Ուսանող Ն. Ասլեանը իր զգացված ճառից յետոյ առաջարկում է յոտնկայս յարգել ներկայ պատերազմում անմեղ զոհվածների յիշատակը։

Բոլորը ոտքի են կանգնում։

Տիրում է խորհրդաւոր լռութիւն։

Ինժ. Ս. Թառայեանը նկարագրում է փախստականների սոսկալի դրութիւնը, ծանօթացնում է Էջմիածնում կատարված կենտրոնական համագումարի որոշումների հետ և առանձին շնորհակալութիւն յայտնում համաժողովի կողմից Մոսկվայի Հայ Կանանց Կոմիտէի կազմին, որը իր ժրաջան աշխատանքներով շտապել էր որոշ չափով մեղմացնել այդ թշուառների ծանր դրութիւնը։

Եւ այլն և այլն...

Երեկոյթի վերջում, բոլորը ոտքի են կանգնում և երգում են խմբովին «Մեր Հայրենիք» *) երգը։

Ժողովականները միանգամայն գոհ տրամադրութեան տակ ցրվեցին այդ նոր ընկերութեան անդրանիկ երեկոյթից գիշերվայ ժամը 2-ին, իրանց հետ տանելով մեր մռայլ կեանքի գարնանամուտի քաղցր յոյսերը։

Մ. Ասլեան

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Վաղը մայիսը, այսինքն տարուան ամենագեղեցիկ ամիսը պիտի սկսի, ու այսօր, ապրիլ 30, Համբարձման տօնն է։ Տեղւոյս օրերգաց միութիւնը լաւ ընտրած է այդ երկու օրը՝ Էջմիածնի գեղեցիկ լճին շուրջ հանդէս սարքելու և եկամուտը յատկացնելու կամաւորներուն։

Հանդէսը սկսելէն օր մը առաջ արդէն սարքուածքները սկսած էին։

Վաղարշապատի ազգաբնակութիւնը, միաբանութիւնը, մեր գաղթականները և այս ու այն տեղէն եկւորները չորեքշաբթի երեկոյէն սկսեալ տենդոտ կերպով, խումբերով կուգան ու կը դիտեն սարքուելիքը և անհամբեր են հանդէսը սկսելու։

Իրաւ որ հանուր աշխարհի համար այս տխրաւոր օրերուն մէջ, մարդուս զգացումները միմիայն երբ ցաւատանջ լարումով կը գործեն, այդ վիճակէն սթափուելու լաւ միջոց մըն էր՝ դիտողներուն համար՝ վերոյիշեալ հանդէսը, մանաւանդ որ եկամուտին նպատակն ալ շատ գնահատելի էր։

Ո՞վ կարող էր չհրապուրուիլ սա բնական ճոխ և արհեստական համեստանակ կարգաւորուած տեսարանէն։

Էջմիածնի լիճը բազմաթիւ հայերու ծանօթ է իր անտառով միասին՝ իբրև իրական մեծագործութիւններէն մին՝ լուսայիշատակ Աշտարակեցի կաթողիկոսին, իսկ այս հիասքանչ վայրերը Էջմիածին հանդիպող ամեն անհատի չեն կրնար անծանօթ մնալ։

Նոյն այդ արհեստականապէս կառուցուած լճակը, որ հիանալիօրէն պարուրուած է բարձրուղէշ անտառին այլազան ծառերու սաղարթներովը, բարձրադիր գետնի մը վրայ շինուած է վանքին շէնքերուն կից։ Իսկ գետինը՝ լճին ափի սալայատակներէն զատ խոտաւէտ մարգագետին մըն է, որմէ բուսած ծաղկախառն խոտերը բարձրացած են արդէն և ծածկած են ծառերուն բունին գետնամերձ մասը։ Թռչունները կը պտուտքին վանքին գմբէթներուն շուրջը՝ և ապա կուգան կը թառին՝ լճին վրայ բարձրէն կախուած դալար ոստերուն ծայրը՝ կենդանի օդկոյներ ձևացնելով։ Քիչ մը վարը մեծատարած աւազանին անկիւններուն վրայ՝ ի՜նչ գեղեցիկ կը յարմարին գալարախիտ տերևներուն մէջ շարուած ելեքտրական գունագեղ լամբարները։ Գալով սպիտակ սաւաններու վրայ սարքուած անուշեղէններն ու շիշերը կրող սեղաններուն, որոնք կը կէտկիտեն ամբողջ ծառաստանին տարածութիւնը, իրենց շուրջը բռնած աթոռներով միասին խտացիկ մարգերուն մէջը թաղուած են. ամբողջ լճին շուրջը տերևներուն մէջ ագուցուած են բազմագոյն, բազմաձև դրօշներ։

Քասախ գետին երկու շինական ոճով մակոյկներն ալ այստեղ լճին միապաղաղ ջրերուն վրայ բերուած են ահա, և ամեն բան կազմ ու պատրաստ է, ու Արարատի կողմէն ծագած մեծափառ արևը անսպառ շողեր կը մաղէ այդ բոլոր գեղեցկութեանց վրա։

Համբարձման տօնին առթիւ մատուցուած պատարագին Վեհարանէն եկեղեցի կիջնէ Վեհ. Հայրապետը, շուրջը ունենալով Էջմիածնի եպիսկոպոսաց և վարդապետաց դասը ամբողջ։ Հոգևորական այս մեծավայելուչ հանդիսաւոր թափորը դիտելու կերթայ անգամ մը՝ ասդին լճին շրջակայքը հաւաքուած բազմութիւնը և ապա, աւելի ստուարացած երկսեռ բազմաթիւ խմբերով, կը վերադառնայ, կառնէ մուտքի տոմսերը (15 կ.) և մտնելով հանդիսատեղին՝ կը մասնակցի տօնակատարութեանը ամենաեռանդուն թափով։

* * *

Երկու օր այսպէս՝ շարունակուեցաւ՝ առաւօտէն սկսեալ մինչև գիշերուան ժամը 10-ը։ Վաղարշապատի մէջ և շրջականներէն գտնուած բոլոր երգիչներն ու նուագածուները գործի վրայ էին։ Զուռնա, տըկզար, զոնալթա, ջուլթակ, նուագ, թմբուկ կածուէին ու կածուէին։ Նոյնքան ալ այլազան էին բազմութեան դասակարգերը, որոնք հսկայ աւազանին բոլոր եզերքը մանեակաձև լեցուած էին, շրջում կամ նստում։ Անոնց այլաձև, խայրաբղէտ տարազները ընդհանուր կանաչին և ջրերու կապոյտին հետ որքան սիրուն համայնապատկեր մը կը ձևացնէր։

Հանդէսին ամենէն շքեղ և հաճելի ժամերը գիշերային մասն էր, որ ատեն ջրերուն վրայ կախուած ճիւղերուն ելեքտրական լամբերը լուսավառիլ կը սկսէին։ Անտառն ու սեղանները, դրօշակները, մարդիկ ու մարգերը ամբողջութեամբ լճակին մէջ կարտացոլային, իսկ ջրերու մակերեսին վրայ՝ զարդարուած երկսեռ երիտասարդներու մակոյկներէն անդադար հրթիռներ կարձակուէին, կեղծ նաւամարտներ կը սարքուէին, որոնցմով լիճն ու երկինքը բոցավառութեան մէջ կը թուէին, և երգեհոններուն ձայնը երթալով կը խանդավառէր հանդիսականները։

Այսպէս՝ շատ սիրուն և խաղաղ անցաւ հանդէսը. հարուստները, ընտանեօք, բնական է որ վճարումներու շնորհիւ աւելի ըմբոշխնեցին հանդէսը. գեղջուկ սիրահարները այսպիսի եզական հանդէսներէն ինչպէս ալ անհուշ օգտուիլը գիտեն և միմեանց հետ աչքերով կը խօսակցէին։ Իսկ մեր գաղթա-

---

*) Այստեղ պէտք է նկատել, որ «Մեր Հայրենիքը» չէ և չի էլ կարող համարվել մեր ազգային հիմնը, որովհետև դա իտալուհու երգն է։ Այս թիւրիմացութիւնը պէտք է մի անգամ ընդ միշտ պարզել։ Մ. Ա.

կանները, որոնք այս ու այն կողմը ուժասպառ երևոյթով՝ ծառերու բունին թիկն տուած՝ խոկուն-խոկուն կը դիտէին այս երազային տեսարանը, Աստուած գիտէ թէ անոնց հոգին ինչ յուզումնալից շրջաններ անցուց:

Գաղթական

Ց. Գ.—Վերոյիշեալ հանդէսէն գոյացած գումարը մօտ 700 ր. եղած է: Նոյն

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ՇԱՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Պարսկաստանից գրում են «Нов. Вр.»-ին.

«Ներկայում ռուսական կառավարութեանը թոյլատրված է շաքար արտահանել Պարսկաստան Կասպից ծովով և ամիսը 200,000 պուդից ոչ աւելի, որով և օգտվում է Բագուի կոմիսիոներների մի խմբակ, իր ձեռքն առնելով բոլոր շաքարը և գինը բարձրացնելով 11 ռուբլու (բացի այդ՝ վերադարձի ակցիզ են ստանում 2 ր.՝ արտահանված իւրաքանչիւր պուդ շաքարի համար) այն ժամանակ, երբ շուկայի գինը Բագւում 6 ռուբլի 50 կոպէկ է: Այդպիսով այս պարոնները ամիսը իրանց գրպանը դնում են մօտ 1.200.000 ռուբլի, որ տարբերութիւնն է կազմում Բագուի և Պարսկաստան արտահանվող շաքարի գների միջև:

«Ռուս վաճառականները, որ առևտուր ունէին Ատրպատականի և Մազանդարանի գաւառներում, համբերեցին-համբերեցին և վերջապէս համբերութիւնները կորցնելով՝ հաւաքվեցին և, այդ աննորմալութիւնը քննելով, դիմեցին առևտրի մինիստրութեան, խնդրելով թոյլատրել իրանց շաքարի ազատ արտահանութիւն Պարսկաստան առանց ակցիզի, և դրանով սահման դնել պարոնայք կոմիսիոներների ագահութեան, իսկ գանձարանին տալ օգուտ ամիսը, Պարսկաստան արտահանվող շաքարի համար, 400,000 ր. ակցիզ:

«Անհրաժեշտ է բացատրել, որ Ատրպատականը և Մազանդարանը բոլորովին զատված են Պարսկաստանի գաւառներից Խորասանի և Էլբուրզի դժուարանց լեռներով, Պարսկաստանի միւս գաւառների հետ յարմար ճանապարհներ չունին, այդ պատճառով իսկ երկիւղ չը կայ կարծելու, որ այդ ճանապարհով մենք շաքար կարտահանենք մեզ հետ կռւող պետութիւնների համար»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Զանազան կողմերից լուրեր են ստացվում, որ կիրակի օրը տեղացած կարկուտը և հեղեղը բաւական մեծ վնասներ են հասցրել քաղաքի մասերում և առանձին տնտեսութիւններին: Քաղաքի մի քանի մասերում, մանաւանդ Վէրա թաղամասում կարկուտը ջարդել է բոլոր այն լուսամուտների ապակիները, որոնք նայում են դէպի արևմուտք:

◆ Մայիսի 8-ին քաղ. սանիտարական յանձնաժողովը դիտեց քաղաքի I և II թաղամասերի ճաշարանների խոհանոցները և նրանցից մի քանիսում գտաւ հակասանիտարական երևոյթներ: Այդ բանը առանձնապէս աչքի է ընկել Արտիստական Ընկ. խոհանոցում: Սանիտարական յանձնաժողովը կազմել է արձանագրութիւն և առաջարկել է ակումբի աւագներին միջոցներ ձեռք առնել նկատված դեֆեկտները վերացնելու:

◆ Պետ. Դումայի անդամ Ա. Չխենկէլի մեկնեց Քութայիս: Թիֆլիսում եղած միջոցին նա տեսակցութիւն ունեցաւ Ն. Լ. Պետերսոնի հետ, որի ժամանակ խօսեց Քութայիսի նահանգի և Սուխումի գաւառաշրջանի պատերազմից վնասված խաղաղ ազգաբնակութեան և սովի մասին:

◆ Առաջիկայ շաբաթում Կովկասի շրջանի ճանապարհների հաղորդակցութեան պաշտօնեաները Բորժոմում բանալու են սանատորիա առողջացող զօրականների համար, որոնք ամառանոցի կարիք են զգում: Ինչպէս կահաւորութիւնը, նոյնպէս և պահելը իրանց վրա են վերցրել վերև յիշված ծառայողները:

◆ Մայիսի 11-ին, երեկ. ժամը 3-ին, Նաւթլուղի դասաւորող հիւանդանոցից քաղ. լազարէթները տեղափոխվեցին 303 հոգի հիւանդ ու վիրաւոր զօրականներ: Դրանցից 96 վիրաւորներ են, 141 ընդհանուր հիւանդներ և այլն:

◆ Վաղը, ամսիս 14-ին, Ժողովրդական Տան բեմի վրա հայկական դրամատիկ. սեկցիայի սիրողները կը ներկայացնեն «Վանիւշինի զաւակները» պիէսը:

◆ Նաւթլուղի դասաւորող հիւանդանոցից երէկ տեղափոխվել են քաղ. հիւանդանոցները 19 հոգի, այնպէս որ դասաւորող հիւանդանոցում ներկայումս մնում են 22 հիւանդներ:

◆ Տ. Փիլոյեանի առևտրական գիտութիւնների դասընթացներում վերջացել են քննութիւնները: Ընթացիկ տարում դասընթացների բոլոր բաժանմունքներում եղել են 284 հոգի, որոնցից 62-ը ունկնդրուհի: Դասընթացքները աւարտել են 142 հոգի, որոնցից ռուսներ՝ 12, վրացիներ՝ 22, հայեր՝ 97, ուրիշ ազգութիւններից՝ 11:

ԿՈՎԿԱՍ

◆ Շուշու քաղաքագլուխ Մելիք-Շահնազարեան մեզ հեռագրում է հետևեալը. «Կեանքի և բնակարանների թանգութեան մասին լուրերը Շուշու վերաբերմամբ ճիշդ չեն: Ամառանոցաւորները կը գտնեն լիակատար հանգիստ և յարմարութիւն»:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպ. երգեցիկ խմբի համերգը

Արտիստական Ընկերութեան դահլիճում ամսիս 10-ին տեղի ունեցաւ, փախստականների օգտին, Ներսիսեան դպրոցի երգեցիկ խմբի համերգը՝ Սպիրիդոն Մելիքեանի ղեկավարութեամբ:

Սպ. Մելիքեանը երկար տարիներ վարել և այժմ էլ տոկունութեամբ վարում է երաժշտութեան դասատուի պաշտօնը, ունի փորձառութիւն և այդ պատճառով էլ աջողվում է նրան կազմակերպել երգեցիկ խումբ և առ հասարակ խմբական երգեցողութիւն: Ի միջի այլոց նա ունի կազմած ուսումնական ձայնանիշներով երաժշտութեան դասագրքեր, որտեղ զետեղված են գլխաւորապէս նրա ինքնուրոյն և թարգմանական երգերը:

Գալով այդ օրվայ համերգին, կարելի է ասել, որ ծրագիրը բազմակողմանի և բաւական մշակված էր, բաղկացած երկու բաժնից՝ հայ, ռուս և օտարազգի հեղինակների երկերից:

Համերգը սկսվեց «Մեր հայրենիք» հանրածանօթ հայկական հիմնով: Ապա երգվեցին մի շարք հայերէն և ռուսերէն երգեր, որոնց մէջ աչքի էին ընկնում գլխաւորապէս հայ ժողովրդական երգերը, որ երգում էր ամբողջ խումբը, մեծ հետաքրքրութիւն և հոգեկան հաճոյք պատճառելով հանդիսականներին, որոնք մեծ մասամբ ուսուցիչներ և երկսեռ ուսանողներ էին:

Հայերէն երգերի մեծ մասը հէնց խմբապետ Սպ. Մելիքեանի ինքնուրոյն երգերից էին, որոնք երգվեցին մեծ աջողութեամբ և համարեա թէ՝ հասարակութեան խնդրանօք՝ իւրաքանչիւր երգը կրկնվեց երկրորդ անգամ:

«Գարնան երգը», Ռ. Մելիքեանի, սոլօ երգեց, բաւական աջող, աշ. Հալաբեանը, դաշնամուրի նուագակցութեամբ:

Նաև աջող երգվեցին միւս հայկական երգերը:

Ռուսերէն երգերից խումբը աջող երգեց «Лѣсной царь» Շուբերտի, իսկ Չայկովսկիի «Легенда»-ն մի փոքր օտարոտի էր թւում և չէր համապատասխանում բնագրին:

«Осеняя пѣсня»՝ Մենդելսոնի՝ դուէտ երգեցին Ամիրեան և Հալաբեան, ցանկալի տպաւորութիւն թողնելով հասարակութեան վրա: Երգիչները արժանացան ծափահարութեան:

Համերգը վերջացաւ ժամը 11-ին: Սպ. Մելիքեանը արժանացաւ երկարատև ծափահարութեան:

Թէև եղանակը վատ էր, այնու ամենայնիւ դահլիճը լիքն էր:

Պ. Սրուանձտեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 11 մայիսի

Խնդրում եմ տեղ շնորհել ուղղելու երկու սխալ տեղեկութիւն Գէորգեան ճեմարանի մասին, որ սպրդել էին «Մշակի» մէջ:

1) Ճեմարանի լսարանական բաժինն այս տարի աւարտեցին ոչ թէ 4 հոգի («Մշակ» № 96), այլ 12 ուսանողից 10, այսինքն, Ասրիեան, Խօջայեան, Ղազարեան, Մկրտումեան, Ներսիսեան, Ոսկերչեան, Ուշաունի, Սարգսեան, Վարդանեան և Տէր-Յովհաննիսեան. իսկ երկու ուսանող, Եօլչիւճեան և Ոսկանեան, որոնք աւարտական շարադրութիւն դեռ չէին ներկայացրել՝ համաձայն Մանկավարժական ժողովի որոշման՝ դիպլօմ կը ստանան, երբ ներկայացնեն բաւարար աւարտական շարադրութիւն:

2) Ես հրաժարվեցի ճեմարանի տեսչութիւնից ոչ թէ ընտանեկան պատճառով («Մշակ» № 92), այլ որովհետև— ինչպէս գրել եմ պաշտօնական հրաժարականիս մէջ— մի տարվայ պաշտօնավարութեանս ժամանակ ճեմարանում ես համոզվեցի, որ այնտեղ տիրում են պայմաններ, որոնց հետ ես չեմ կարող հաշտվել և սակայն անկարող եմ նրանց վերացնել:

Իսկ թէ ի՛նչ պայմաններ են սրանք՝ գուցէ առիթ լինի այս մասին երբևիցէ մանրամասն գրել. Ստ. Մալխասեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԱՆԷ ՍԱՆԴԱՆՍԿԻ

Ապրիլի 12-ին Մելնիկից դէպի Նեվրոկոպ տանող ճանապարհի վրա թագստից սպանվեց մակեդոնական յեղափոխական Եանէ Սանդանսկի: Այդ մարդու անձնական յատկութիւնները, անսպառ եռանդը և կազմակերպչական ոգին լրացնում էին իրար: Այն շարժման մէջ, որի գլուխն էր կանգնում նա և որի մէջ նա մտցրել է գաղափարական սկզբունք և իդէալական ոգևորութիւն, հնարաւորութիւն տուեց բուլղարացի շատ սոցիալիստների մասնակցել մակեդոնական յեղափոխութեանը և աշխատել սանդանիստների հետ միասին: Այդ բանը բոլորովին առանձնակի տեղ է տալիս Եանէ Սանդանսկիին մակեդոնական ժամանակակից յեղափոխականների մէջ:

Սանդանսկին ծնվել է Մակեդոնիայում, Մելնիկի շրջակայքում, 1873 թ.: Բայց արդէն 1876 թ. Սանդանսկիի ծնողները տեղափոխվում են Բուլգարիա, Դուբնիցա քաղաքը, որ գտնվում է մակեդոնական սահմանում: Սանդանսկին այստեղ է ստացել իր սկզբնական կրթութիւնը, այստեղ է մշտական շփում ունեցել մակեդոնական էմիգրանտների հետ, այստեղ է մշակում նա իր համար որոշակի վերաբերմունք դէպի մակեդոնական հարցը, այստեղ է նա զինուորակոչութեան ենթարկվում և հէնց այստեղ էլ կատարում է զինուորական ծառայութիւնը, հասնելով ֆելդֆեբելի կոչման:

Արդէն զինուորական ծառայութեան մէջ եղած միջոցին, Սանդանսկին իրան պատրաստում էր յեղափոխական գործունէութեան: Բայց կարեւորն այդ չէ: Կարեւորն այն է, որ ապրելով մի մթնոլորտում, ուր արդէն կազմվել-պատրաստվել էին հայեացքներ Մակեդոնիայի վերաբերմամբ, այդ կիսագրագէտ մարդը չենթարկվեց արքայական հայեացքներին: Հաստատութեամբ նա ըմբռնեց Մակեդոնիայի ազատական շարժման բոլոր պակասութիւնները, բոլոր վատ կողմերը, վերագնահատեց այդ հարցի բոլոր արժէքները և որպէս ակտիվ յեղափոխական հանդէս եկաւ միայն այն ժամանակ, երբ նրա համար բոլորովին պարզ եղաւ, թէ ինչ պէտք է անել իր հայրենիքի ազատութեան համար:

Այն, ինչի վրա մտածում էր Եանէ Սանդանսկին Դուբնիցկի զօրանոցում, նոյնն էր, ինչ որ մտածում էր բուլգարական ժողովուրդը: Դրանք երազանքներ էին այն մասին, որպէսզի մակեդոնական յեղափոխութիւնը ազատեն չափազանց պաշտօնական ազդեցութիւններից և նրան դարձնեն բացառապէս ժողովրդական գործ: Դրանք երազանքներ էին այն մասին, որ ժողովուրդը պայքար սկսի իր իրաւունքների համար:

1896 թ. Սանդանսկին 100 մարդով մտաւ Մակեդոնիա, Մելնիկ քաղաքը և, ժողովրդի աջակցութեան վրա յենված, յայտարարեց քաղաքը անկախ: Երեք օր քաղաքի վրա ծածանվում էր բուլգարական դրօշակ, և այդ երեք օրվայ ընթացքում Սանդանսկին երևան հանեց իր յեղափոխական և քաղաքական ընդունակութիւնները: Իմանալով որ չի աջողվի քաղաքը պահել իր ձեռքում, Սանդանսկին կարողացաւ օգտվել այդ երեք օրով նրա համար, որպէս զի կազմակերպի տեղացի ազգաբնակութիւնը ապագայ պայքարի համար: Եւ, իսկապէս, երբ Մելնիկը հարկադրվեց անձնատուր լինել, քաղաքում չը կար մի տուն, որի մէջ Եանէ Սանդանսկին հաւատարիմ հետևողներ չունենար:

Իր ազդեցութիւնը հիմնաւորելով Մելնիկում-Սանդանսկին նոյնպիսի կազմակերպութիւններ սկսեց երկրի միւս մասերում. ձմեռ և ամառ ժամանակ թափառելով այստեղ ու այնտեղ, նա տարածում և քարոզում էր իր գաղափարը: Եւ իսկապէս՝ ամբողջ Մակեդոնիայում չը կար շրջան, որտեղ ազգաբնակութիւնն այնպէս հաստատ և այնպէս կարգապահութեամբ վարժված լինէր, ինչպէս «Պիրինեան թագաւորի» կամ, ինչպէս անուանում էին նրան, «Մերունու» թագաւորութեան մէջ:

Թիւրքաց իշխանութիւնները շուտով հասկացան իրանց հակառակորդի բարոյական ոյժը: Մակեդոնիայի մնացեալ մասերում թիւրքերի դէմ սկսվեց կատաղի կռիւ, որ յաճախ վերջանում էր զինված ապստամբութեամբ: Եւ ամեն անգամ թիւրքերը յաղթող էին հանդիսանում, իսկ Պիրինի թագաւորութեան մէջ բանը այլ կերպ էր. ազգաբնակութիւնը այստեղ զինված ապստամբութեան չէր դիմում: Բայց հաստատապէս կազմակերպված էր «թագաւորի ձեռքով». Նա միշտ դուրս էր պրծնում թիւրք իշխանութիւնների ձեռքից: Օսմ. պաշտօնեաները այդ մեծ շրջանում բացարձակապէս ոչինչ չունէին անելու. ամեն բան անում էին Սանդանսկիի մարդիկ, այսինքն, աւելի ճիշդը, ամեն բան անում էր այդ շրջանի ազգաբնակութիւնը: Հաւաքվում էին տուրքեր և հարկեր, սահմանվում էին դատարաններ, կազմակերպվեց ոստիկանական գաղտնի ծառայութիւն. և այս ամենի մէջ թիւրք իշխանութիւնները ոչ մի մասնակցութիւն չունէին: Գիւղերում և շէներում շինվել էին դպրոցների և ուսումնարանների սպիտակ շէնքեր, ուսուցիչների մի ամբողջ շտաբ ազգաբնակութեանը պատրաստում էր այն հեռաւոր ապագայի համար, որին այնպէս հաւատում էր կիսագրագէտ «Մերունին»: Ըմբռնելով որ ազատութեան ամենաուղիղ ճանապարհն է կրթութիւնը, «Պիրինեան թագաւորը» ոչ մի միջոց չէր խնայում իր իմպրովիզացիօն թագաւորութեան համեստ բիւջէից դպրոցական գործի բարգաւաճման համար:

Դրա հետ միասին Սանդանսկին մեծ ջանք է թափել հողային հարցի վրա և ագրարային բարենորոգումների մանրամասն ծրագիր էր մշակել:

Երիտասարդ - թիւրքերի յեղաշրջումը հնարաւորութիւն տուեց Սանդանսկիին հաստատելու և հիմնաւորելու այն ամենը, ինչ որ ինքը ձեռք էր բերել յեղափոխական պայքարի ընթացքում: Սանդարսկին երիտասարդ թիւրքերին չէր հաւատում. Նա նրանցից վերցրեց այն, ինչ որ կարելի էր, և այդպիսով ժողովուրդը պատրաստեց յետագայ պայքարների համար: Եւ երբ 1909 թւին, նա իր չէտաները տարաւ դէպի Կ. Պոլիս՝ փրկելու Մահմուդ Շէվքէթ փաշայի գործը, նա կռւում էր ոչ թէ ներկայ թիւրքիայի համար, այլ Բուլգարիայի ապագայի համար:

Դրանից յետոյ Սանդանսկիի մտահոգութեան առարկան եղան Մակեդոնիայի աւտոնոմիայի խնդիրը և ագրարային ու ազգային հարցերը:

1912 և 1913 թ. թ. անցքերը, առաջին ամիսներում, թւացին նրա իդէալի իրականացման սկիզբը: Նա պատանեկական եռանդով նետվեց թիւրք զօրքերի վրա, և ինչպէս 1898 թ., այնպէս էլ այժմ անում էր ամեն ինչ:

Մի խօսքով՝ Եանէ Սանդանսկին այնքան շատ բան արաւ Մակեդոնիայի և Բուլգարիայի ազատութեան համար, որ իրաւունք ունի անմահանալու իր հայրենիքի հերոսների շարքում:

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

Հին-Նախիջևան, 17 ապրիլի

Խորին շնորհակալութիւն եմ յայտնում հետևեալ հասարակութիւններին, որոնք ժողովարարութեամբ նպաստներ են ուղարկել պարսկահայ գաղթականներին.

1) Հին-Նախիջևանի քաղաքացիք երկու նուագով . .	438 ր. 80 կ.
2) Սիւնեաց աշխարհի գիւղերից՝	
ա) Բռնակոթից . .	233 ր. — կ.
բ) Շաղատից . .	120 ր. 20 կ.
գ) Անգեղակոթից . .	100 ր. — կ.
դ) Բնունիսից . .	22 ր. 50 կ.
ե) Բալաքից . .	47 ր. — կ.
զ) Աղբեանդից . .	52 ր. 30 կ.
է) Ղարաքիլիսայից .	5 ր. 24 կ.
» » .	$51^{1}/_{2}$ պ. ցորեն
ը) Ուզից . .	42 պ. ալիւր
թ) Մազրայից . .	81 ր. 49 կ.
ժ) Ս. Մելիք-Թանգեանից	8 ր. — կ.
Ընդամենը	1108 ր. 53 կ. $93^{1}/_{2}$ պ. ցորեն և ալիւր

Սիւնեաց աշխարհի Սիսիանի հինգ գիւղ ժողովել են, բայց ձիւնի պատճառով չեն կարողացել հասցնել յանձնաժողովին:

Ներսէս եպ. Մելիք-Թանգեան

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՑՈՒՑԱԿ

ԶԱՆԱԶԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ

(Մայիսի 4-ից մինչև 15-ը)

Կազմված Թիֆլիսի քաղ. դումայի տնտես. մասնաժողովի և հաստատված՝ Թիֆլիսի նահանգապետի կողմից մայիսի 2-ին

I

Հաց.—I տեսակի փռան՝ ֆունտը $5^{1}/_{2}$ կ., I տես. թօնրի՝ ֆ. 6 կ., II տես. փռան և թօնրի 5 կ., III տես. փռան և թօնրի $4^{1}/_{2}$ կ., հաճարի հաց փռան ֆ. 3 կ., լաւաշ I տեսակի թօնրի ֆ. 6 կ., լաւաշ II տես. թօնրի $5^{1}/_{2}$ կ., բուլկի ֆրանս. $^{1}/_{2}$ ֆունտանոց 5 կոպէկ:

Միս.—Սուկի առանց սակաղնի, I տեսակի (ազդրը առանց արտալայի) սուկի մասը ֆունտը 18 կ., II տես. (չալաղաջ, դօշ, սապարավ, կոտլետային մաս) ֆ. 15 կ., III տես. (թիակը, անգալա, ուսը, նախաուս, արտալա, շլինքը մկաններով, 7 ողնաշարով և այլն) ֆ. 10 կ., ոչխարի ֆ. 17 կ., գոմէշի ֆ. 10 կ., խոզինը կաշիով ֆ. 14 կ., խոզինը առանց կաշու ֆ. 15 կ., դմակի ֆունտը 22 կ., խոզի ճարպ աղած ֆ. մինչև 30 կ., խոզի ճարպ հալեցրած ֆ. 28 կ.:

Կրուպա.—Պերլովի ֆ. մինչև 10 կ., մաննայա ֆ. մինչև 10 կ., գրեչն. ֆ. մինչև 9 կ., պշենօ (կորեկ) ֆ. մինչև 6 կոպէկ:

Աղ.—Սեղանի ֆ. մինչև 2 կ., մաքրած (քարկներով) ֆ. մինչև 3 կ., Կողբի (քար) պուդը 70 կոպ.:

Բրինձ.—Աքուլայի ֆունտը մինչև 14 կ., սարաց. ֆ. մինչև 9 կ., մակարօն ֆ. 14 կ., վերմիշել ֆ. 14 ֆ., սիսեռ 6 կոպ.:

Ձէթ.—Արևածաղկի ֆ. մինչև 19 կ., շիրբախտի ֆ. մինչև 35 կ., խլոպկով. (բամբակակորիզի) 15 կոպ.:

Բանջարեղէն եւ կանաչեղէն.—Գետնախնձոր (կարտոֆ.) ֆ. մինչև 3 կ., բազուկ ֆ. մինչև $2^{1}/_{2}$ կ., սոխ ֆ. 3 կ., սխտոր ֆ. 5 կ., գազար ֆ. 4 կոպ.:

Ձուկ.—Ձուտախի (առանց գլխի) ֆ. մինչև 30 կ., ձուտախի (գլխով) ֆ. մինչև 8 կ., թառափ (օսետրինա) «կաթնով» 30 կ., թառախ գլխամասով ֆ. մինչև 10 կ., շիղաձուկ (սուդակ) ֆ. 17 կ., սաղան ֆ. 14 կ., կուտում ֆ. 14 կոպ.:

Շաքար.—Գլուխ ֆունտը 18 կ., կոտրտած և աղացած ֆ. 19 կ., շաքարաւազ ֆ. 16 կ.,

Մոմեր.—Եղբ. Կրեստովն. ֆ. մինչև 40 կ., ուրիշ գործարանների 37 կոպ.:

Լուցկի.—Լապշինայի և ուրիշ. 10 արկղիկը 25 կ., մէկ արկղիկը 3 կոպ.:

Կաթնային մթերքներ.—Հալած իւղ I տեսակի ֆունտը մինչև 55 կ., աղաբած իւղ (էքսպորտն.) ֆ. մինչև 52 կ., իւղ տաքացրածներով ֆ. մինչև 55 կ., I տեսակի կարագ իւղ Պարիզի ֆ. մինչև 68 կ., իւղ հում սերից ֆ. մինչև 64 կ., կաթի կրուժկան 5 կ., պանիր թուշի ֆ. մինչև 28 կ., տվորոգ ֆ. մինչև 10 կ., թթուասեր (սմետան) ֆ. մինչև 30 կ., ձու 10 հատը մինչև 25 կ.:

Ցորեն.—Պուդը մինչև 2 ռուբլի:

Սիմինդր.—Պուդը 90 կ. մինչև 1 ր. 5 կ.:

Վաճառականների ներկայ սակագնին հակառակ գնալու դէպքում բողոքելու և աջակցութիւն ստանալու համար պէտք է դիմել ոստիկանական պաշտօնեաներին կամ առևտրա-տնտեսական պոլիցիայի հերթապահ գործակալներին (ագէնտներին). նոյնպէս և մթերքների վրա հսկող մասնաժողովի նոյն ռայոնի անդամին կամ քաղաք. ուպրավային (IV բաժանմունք):

Մթերային մասնաժողովի անդամները քաղաքային դումայի ձայնաւորներն են, որոնք և հսկում են առևտրի ու շուկաների վրա:

I քաղաքամասում Պ. Ս. Վասիլեվ, II և III քաղ.՝ Գ. Ն. Պէյլ և Մ. Ի. Մարտիրոսեան, IV և V քաղ.՝ Ա. Մ. Տէրտէրօվ, VI և VII քաղ.՝ Ս. Մ. Նունուֆարօվ, VIII և IX քաղ.՝ Ս. Ա. Մինէեվ և X, XI և XII քաղ.՝ Ա. Պ. Գօրուլաշվիլի և Պ. Ի. Սօսին:

Առևտրա-տնտեսական վերակացուների և գրասենեակների հասցէները:

I Քաղաքամաս Վէրայի հր. քաղ. տուն: II—III քաղ.՝ Գրաֆսկայա, տ. Խուրշուդովի: IV V քաղ.՝ Թուրքաց մէյդան: VI—VII քաղ.՝ Հալաբար, Կախեթինսկ. հր. տ. Նունուֆարօվի: VIII IX քաղ.՝ Ելիզավէտինսկ. № 10, տուն Ցարութինեանի: X, XI—XII քաղ.՝ Չէրքէզովսկ. № 87 տ. Ասրիեվի:

Քաղ. վարչ. անդամ Չարար

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր.	երեկ.
	» Բորժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր.	առաւ.
	Բորժոմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին., Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. միզաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$9^{1}/_{2}$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւնդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—80

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ
Հինգշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, մայիսի 14-ին 1915 թ. Քամոյեան—ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխական տարեկան ընդհանուր ժողով:
Զբաղմունքի առարկաներն են
1) Եկեղեցպանական կրպակների վերաքննութեան հարցը:
2) 1914 թ. տարեկան հաշվի քննութիւնը:
3) 1915 թ. նախահաշվի քննութիւնը:
4) [illegible] Վերաստուգիչ Ցանկաժողովի [illegible]
5) Վերաստուգիչ Ցանկաժողովի 1 անդամի ընտրութիւն:
Քամոյեան—ս. Գէորգ եկ. Հոգաբարձութիւն
ԾԱՆՕԹ.—[illegible]
(ա. օ.) 300. 3—2

Դիլիջանում մայիսի 20-ին տեղի կունենայ [illegible] ԲՈՒՌԵՆԸ [illegible]
ԱՃՈՒՐԴԸ:
(ա. օ.) 285. 6—5

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
ԲՆԱԿԱՐԱՆ
բաղկացած վեց մեծ, փառաւոր սենեակներից իր բոլոր յարմարութիւններով, Հալաբարում, Кахетинская пл. д. Бр. Вартановыхъ, № 1. Հարցնել կառավարիչ Լևոն Սաթուրեանին.
(Լ. Հ.) 289. 3—2

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный